# Ազգ
Azg

4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2010 ՇԱԲԱԹ 160 (4540)

ISSN: 1829-1651


## Սեպտեմբերի 19-ին Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու գմբեթին խաչ չի լինի

Թուրքական իշխանությունը հայտարարում է իբր տեխնիկական պատճառով խաչի տեղադրումը սեպտեմբերի 19-ին չիրագործելու մասին: Վանի նահանգապետը նշել է, թե 200 կգ-անոց խաչի տեղադրման համար անհրաժեշտ է հատուկ աշտարակ, բայց սեպտեմբերի 19-ին խաչը կցուցադրվի հյուրերին, իսկ պատարագից անմիջապես հետո կսկսվեն խաչի տեղադրման աշխատանքները: Այս բոլորը Վանի նահանգապետն ասել է Աղթամարի Ս. Խաչի վերաբացման աշխատանքին հետեւելու համար Վան ժամանած Պոլսո հայոց փոխպատրիարք, արքեպիսկոպոս Արամ Աթեշյանին, որին Վանի քաղաքապետը նաեւ խոստացել է ամեն ինչ անել Ս. Խաչի վերաբացումը լավ կազմակերպելու համար, այդ թվում՝ աջակցել հյուրերին թե՛ տրանսպորտի, թե՛ տեղավորման հարցում: Ինչպես տեսնում եք՝ պատարագի օրը խաչի չտեղադրման բացատրությունը տեղավորվում է թուրքական աղվեսության շրջանակում, որի մասին ով-ով՝ հայերս լավ գիտենք:

## Մեդվեդեւն ու Ալիեւը Արցախի հարցի մասին ոչինչ չեն ասել

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Հայաստանն ու Ադրբեջանը պետք է չդադարեցնեն ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցով շփումների ինտենսիվությունը: Այսպիսի կոչ է արել երեկ Բաքվում պաշտոնական այցելությամբ գտնվող Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ համատեղ ասուլիսում:

Ադրբեջանական ու ռուսաստանյան լրատվամիջոցների տեղեկացմամբ, Մեդվեդեւը հայտարարել է, որ վերջին շրջանում Ռուսաստանի նախագահի մասնակցությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումները բավականին ինտենսիվ են դարձել, եւ այդ ինտենսիվությունը չպետք է պակասի, որին իր աջակցությունը բերելու առումով Ռուսաստանն, ըստ ՌԴ նախագահի, պատրաստակամ է՝ կատարելով իր պարտականությունները Մինսկի խմբի համանախագահական շրջանակներում եւ որպես հարեւան հետեւողական լինելով իր բարոյական պարտավորությունների կատարմանը:

«Ես անձամբ պատրաստ եմ շարունակել այդ կարգի շփումներն ու քննարկել ամենաբարդ հարցերը, որ դեռեւս մնացել են օրակարգում», ասել է Մեդվեդեւը: Ինչ վերաբերում է Գյումրու ռուսական ռազմակայանի տեղակայման ժամկետի երկարաձգման հայ-ռուսական արձանագրությանը, որ մեծ անհանգստություն է առաջացրել Ադրբեջանում, ապա այդ առնչությամբ Մեդվեդեւը նշել է, թե ռազմակայանը որեւէ սպառնալիք չի ներկայացնում Ադրբեջանի համար: «Մենք շահագրգռված ենք, որ այստեղ խաղաղություն լինի եւ կարգուկանոն: Հենց այդպես էլ պետք է դիտարկել Հայաստան իմ այցելության արդյունքները: Ոչ մի ստորջրյա կամ այլեւայլ նկատառում այստեղ չկա», պարզաբանել է Մեդվեդեւը:

Տես էջ 2

ԱՄՆ

## Ադամ Շիֆը կոչ է անում իր երկրի հանրային հեռուստատեսությանը՝ Հայոց ցեղասպանության մասին ֆիլմը ցուցադրել

Գերմանացի ռեժիսոր Էրիկ Ֆրիդլերը 90-րոպեանոց ֆիլմ է նկարահանել Հայոց ցեղասպանության թեմայով՝ամերիկյան եւ եվրոպական աղբյուրների հիման վրա: «Աղետ» անունով ֆիլմում հիմնականում վավերագրեր են, ընդ որում՝ մի մասը նախկինում երբեք չհրապարակված փաստեր՝ ցեղասպանության ականատես դիվանագետների նամակագրությունից: Օրինակ, ըստ Spiegel-ի՝ Խարբերդում ամերիկյան հյուպատոս Լեսլի Դեյվիսն իր նամակներից մեկում գրել է, թե տեղի ունեցածի համեմատ «մարդասպանություն» սարսափելի բառը շատ մեղմ է հնչում: Ֆիլմում վկայակոչվում է նաեւ այն հանրահայտ փաստը, որ Թալեաթը ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուից պահանջել է ամերիկյան ապահովագրական ընկերությունների (Equitable Life of New York, New York Life Insurance) հայ հաճախորդների անունները՝ ասելով, թե հայերը մահացել են, նրանց ժառանգները չկան, եւ նման դեպքում պետությունն իրավունք ունի նրանց ունեցվածքը տնօրինելու, ինչը Մորգենթաուն մերժել է: Այս ֆիլմը նկարահանվել է Գերմանիայի հանրային հեռուստատեսության պատվերով: ԱՄՆ-ի կոնգրեսական Ադամ Շիֆը մի նամակ է ուղարկել նաեւ իր երկրի հանրային հեռուստատեսության տնօրեն Փոլ Քերգերին եւ կոչ արել ցուցադրել այս ֆիլմը: Ըստ կոնգրեսականի՝ ֆիլմի ցուցադրությունը հեռուստադիտողին լուրջ դաստիարակչական ծառայություն կմատուցի: Ի դեպ՝ կոնգրեսականի նախաձեռնությամբ Կոնգրեսում արդեն դիտել են «Աղետը»:

## «Զերկալոն»՝ հայելային կեղծարարությամբ

Ռուսաստանի հայերի միությունը տեղեկացնում է ադրբեջանական լրատվամիջոցների հերթական ապատեղեկատվության մասին: Մասնավորապես, ըստ ՌՀՄ տարածած հաղորդագրության, ադրբեջանական «Զերկալո» թերթը օգոստոսի 31-ին հայ-ադրբեջանական շփման գծում տեղի ունեցած առճակատման առնչությամբ մեկնաբանություն է խնդրել ՌՀՄ փոխնախագահ **Գեղամ Խալաթյանից**: վերջինս իբր ներկայացրել է, թե անտեղյակ է միջադեպի մանրամասներին, միայն լսել է, թե փոխհրաձգություն է եղել: Իսկ թե որքան են ադրբեջանական կողմի զոհերը, Խալաթյանն իբր նշել է, թե «դա կարող է լինել ղարաբաղյան կողմի գիտակցված սխալը»:

Մինչդեռ, ըստ Խալաթյանի, թերթից արված հեռախոսազանգին ինքն արձագանքել է, որ շփման գծի լարվածությունը մեծացնելու փորձեր է անում Ադրբեջանը: Իսկ թե որտեղից է վերցվել, որ ադրբեջանական կողմը յոթ զոհ է տվել, Խալաթյանը պատասխանել է, որ միջադեպը հրթիռային հրաձգություն չի եղել, այլ առճակատում, երբ հակառակորդները տեսնում են միմյանց:

Հարցին, թե ո՞վ է նման տվյալ հրապարակել, ադրբեջանցի լրագրողն արձագանքել է, որ դա ասվել է Հայաստանի պաշտպանության նախարարի կողմից: Սա լսելով՝ Խալաթյանն ընդգծել է, որ տվյալ դեպքում արդեն որեւէ կասկած լինել չի կարող:

Կեղծարարության եւ ստախոսության նման մոտեցումն, ըստ ՌՀՄ հաղորդագրության, արդեն ոչ թե ծիծաղ կամ տխրություն է հարուցում, այլ նողկանք:

Ա. Հ.

## Ադրբեջանական դրոշի ծվենները Բաքվում ու երազանքը՝ տեսնել այն Ստեփանակերտում

Ստեփանակերտում ադրբեջանական դրոշը տեսնելու երազանքը Ադրբեջանի համար սեփական աքլորության ամենաասովորական մի դրսեւորում է: Հերթական անգամ էլ Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերը իր ցանկությունը որպես հեռանկար ներկայացնելով հայտարարել էր, թե ադրբեջանական դրոշը կբարձրացվի Ստեփանակերտում:

Այս առնչությամբ Հայաստանի փոխարտգործնախարար Շավարշ Քոչարյանը արձագանքել է, որ Ադրբեջանն այդ ցանկությունն իրականություն տեսնելու մեկ հնարավորություն ունի. նախ պետք է ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, դիվանագիտական հարաբերությունները հաստատել, եւ փոխադարձ համաձայնության դեպքում դիվանագիտական ներկայացուցչություններ փոխանակել ու ըստ այդմ էլ իրավունք ստանալ ադրբեջանական դրոշ բարձրացնելու ԼՂՀ-ում Ադրբեջանի դեսպանության շենքի վրա: Ըստ Քոչարյանի, Ադրբեջանի ղեկավարությունն իր քայլերով ոչ թե մոտեցնում է այդ պահն, այլ հեռացնում է:

«**Ազգի**» կողմից էլ ավելացնենք, որ Ադրբեջանը թող նախ հոգ տանի Բաքվի կենտրոնում սեպտեմբերի մեկին ամենայն հանդիսավորությամբ բարձրացված ադրբեջանական դրոշի ճակատագրով: Երբ Ալիեւը նույն այդ հանդիսությանը երազում էր Ստեփանակերտում դրոշ ունենալու մասին, թերեւս պետք է նախ երազեր, որ կանգուն մնա նույն այդ օրը բարձրացվածը: Բանն այն է, որ, ըստ «Youtube» կայքէջում հայտնված տեսագրության, սեպտեմբերի մեկին Բաքվում բացված պետական դրոշի հրապարակի՝ 162 մետր բարձրությամբ ձողի վրա բարձրացված 2450 քառ. մետր մակերեսով դրոշը ծվեն-ծվեն է եղել: Դրա վրա ծակեր են հայտնվել, իսկ եզրերն ուղղակի քրքրվել են քամուց:

Պատառոտված ադրբեջանական դրոշն իջեցվել է՝ թերեւս նորոգելու նպատակով:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Դեպարդիեն՝ Հայաստանում եւ Ղարաբաղում



Երեկ «Կարոս» միջազգային փառատոնի շրջանակներում Հայաստան ժամանեց ֆրանսիացի աշխարհահռչակ դերասան Ժերար Դեպարդիեն: Այցի շրջանակում նա հանդիպելու է նաեւ Հայաստանի նախագահի եւ խորհրդարանի ղեկավարի հետ: Հայաստանից դերասանը կմեկնի Լեռնային Ղարաբաղ՝ այցն ավարտելով սեպտեմբերի 7-ին: «Կարոս» փառատոնն անցկացվում է սեպտեմբերի 2-7-ը Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում՝ ԱԺ նախագահի Հովիկ Աբրահամյանի եւ ԼՂՀ նախագահի Բակո Սահակյանի հովանավորությամբ:

## Armenia EXPO 2010 10-րդ ունիվերսալ ցուցահանդեսն էր



Armenia EXPO 2010 տասներորդ ունիվերսալ տարածաշրջանային առեւտրաարդյունաբերական ցուցահանդեսը երեկ բացվեց Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Այն կազմակերպել են Logos expo center ցուցահանդեսային ընկերությունը եւ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միությունը: Միջոցառման բացմանը ելույթ ունեցավ Հայաստանի վարչապետ **Տիգրան Սարգսյանը**: Նա մասնավորապես նշեց, որ այս ցուցահանդեսը բացառիկ հնարավորություն է՝ շփումներ կազմակերպելու գործարարների միջեւ եւ գտնելու գործընկերներ: Նա կարեւորեց ցուցահանդեսի միջազգային լինելը, որն հնարավորություն է տալիս նոր ներդրումներ ներգրավելը Հայաստան: Վարչապետը նաեւ համոզմունք հայտնեց, որ այս միջոցառումը տալու է իր դրական արդյունքները:

Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանն իր խոսքում այն կարծիքը հայտնեց, որ այս ցուցահանդեսը դրական լիցքեր է հաղորդում հասարակությանը, քանի որ հակառակ տարբեր ասեկոսեների, թե ճգնաժամը չենք հաղթահարել, մենք ունենք գործարարներ, որոնք շարունակում են զարգացնել իրենց գործունեությունը:

Ելույթներից հետո վարչապետ Տիգրան Սարգսյանը բացեց ցուցահանդեսը եւ ծանոթացավ այդտեղ ներկայացված ընկերությունների արտադրանքին ու ծառայություններին: Մասնավորապես այս տարի ներկայացված են 180 ընկերություններ, որոնք, բացի Հայաստանից եւ Լեռնային Ղարաբաղից, ներկայացնում են Ռուսաստանը, Բելառուսը, Իրանը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Գերմանիան, Վրաստանը, Թուրքիան, Չինաստանը, Լեհաստանը, Իտալիան, Ուկրաինան:

Armenia EXPO 2010 ընդգրկում էր Հայաստանի տնտեսության բոլոր ճյուղերը՝ արդյունաբերությունը, շինարարությունը, սննդարդյունաբերությունը, տրանսպորտը, տեղեկատվական տեխնոլոգիաները, գովազդը, ֆինանսական ոլորտը եւ այլն:

Ցուցահանդեսը կգործի մինչեւ սեպտեմբերի 5-ը՝ ժամը 10-ից մինչեւ 17-ը: Ա. Մ.

# Փոքրոգություն եւ ուրիշ ոչինչ

Վիկտոր Միշին անունը նոր սերնդին ծանոթ չէ: Հները մինչդեռ կհիշեն, որ նա ժամանակին գլխավորել է խորհրդային կոմսոմոլը, հետո նշանակվել ՀԱՄԿԽ նախագահ: Մի կարճ ժամանակ էլ Լեռնային Ղարաբաղ է գործուղվել որպես Հատուկ կառավարման կոմիտեի անդամ:

Եվ ահա ադրբեջանական Vesti գործակալությունը Մոսկվայում պեղել- հայտնագործել է նրան, հետը հարցազրույց անցկացրել՝ «ապացուցելու», որ Լեռնային Ղարաբաղում «սոցիալ-տնտեսական իրավիճակն ավելի բարվոք է եղել, քան ամբողջ Ադրբեջանում»:

Միշինը հաստատ իր բարեկամ, ինչպես ինքն է ասում, Վոլսկու հիշատակը չի հարգում: Այլապես մոռացության չէր տա վերջինիս դիտարկումը, թե «բովանդակ երկրում ես չեմ տեսել ավելի լքված, ձեռքից գնացած ռեգիոն, քան ԼՂԻՄ-ն է»: Ի դեպ, Վոլսկին այս կարծիքն արտահայտել է խորհրդային պաշտոնական մամուլում: Ուստի պիտի համարել, որ դա երկրի ղեկավարության ընդհանրական տեսակետն էր: Եվ Հատուկ կառավարման կոմիտեն էլ ստեղծվել էր ԼՂ սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելու նպատակով:

Ի՞նչն է Վիկտոր Միշինին ստիպել, որ կեղծի իրականությունը:

Այդ մարդն ամենայն հավանականությամբ մինչեւ այսօր չի ներում ղարաբաղցիներին: Պատճառը բոլորովին էլ քաղաքական չէ:

Բանն այն է, որ Միշինը, որպես Հատուկ կառավարման կոմիտեի անդամ, ԼՂ-ից առաջադրվել էր ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորության թեկնածու: Նրա մրցակիցը հանգուցյալ Բորիս Դադամյանն էր, ում եւ նախապատվությունը տվեց ընտրողների գերակշիռ մեծամասնությունը:

Խորհրդային պատմության մեջ երեւի դա առաջին դեպքն էր, երբ Մոսկվայի պաշտպանությունը վայելող թեկնածուն ընտրություններում պարտվում է: Հավանաբար սեփական պարտության նկատառումով է, որ հիշյալ հարցազրույցում Միշինը Հատուկ կառավարման կոմիտեի ձախողումը բացատրում է «հայ ծայրահեղականների անհաշտությամբ»:

Բայց դա ծայրահեղականություն չէր, այլ իրական ժողովրդավարություն, երբ մարդիկ վստահում էին նրան, ում ավելի լավ էին ճանաչում, ով ԼՂ-ի շահերը պիտի պաշտպաներ եւ ոչ թե՝ կենտրոնական կամ ադրբեջանական իշխանությունների:

Անցել է ավելի քան երկու տասնամյակ, բայց Միշինը, պարզվում է, չի հաղթահարել դառնացածությունը: Եվ առիթը բաց չի թողել մի քանի թունավոր խոսքեր ասելու ղարաբաղցիների մասին:

Վատ է, երբ մարդ փոքրոգի է, հիշաչար, եւ չի էլ կարողանում թաքցնել: Բայց ավելի վատ է, երբ նա սեփական փոքրոգությունը ձգտում է գունազարդել «պետական մտածողությամբ» կամ «ժողովուրդների ճակատագրի հանդեպ մտահոգությամբ»:

Եվ միայն զարմանալ կարելի է, թե ի՞նչ մտադրությամբ է Vesti-ն մոռացվածության փոշին թափ տալիս խորհրդային դարաշրջանի «դինոզավրերի» վրայից: Ի՞նչ են ուզում հիշեցնել եւ ո՞ւմ:

Թե՞ պարզապես ափսոսում են «բաց թողնված հնարավորությունների» համար:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Քաղծառայողին կընտրեն տվյալ ստորաբաժանման ղեկավարները

ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում երեկ քննարկվեց ԱԺ փոխնախագահի Արեւիկ Պետրոսյանի այն օրենսդրական նախաձեռնությունը, որով փոփոխություն է նախատեսվում քաղծառայության մասին օրենքում: Լրացումներով նախատեսվում է հստակեցնել քաղաքացիական ծառայության շրջանակը եւ կոնկրետ սահմանել քաղծառայության մրցութային եւ ատեստավորման հանձնաժողովների կազմը, որտեղ պետք է լինեն համապատասխան մարմնի ղեկավարն ու նրա տեղակալները, կադրային ստորաբաժանման ղեկավարը, համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, նրա տեղակալը, ներքին ստորաբաժանման ղեկավարը: Այդպիսով՝ այս փոփոխությունների ընդունման դեպքում քաղծառայության համապատասխան պաշտոնի համար մրցույթին կամ այն զբաղեցնողի ատեստավորմանը կմասնակցեն միայն այն անձինք, ովքեր ղեկավարելու են տվյալ ստորաբաժանումը, եւ որտեղ աշխատելու է ընտրվող կամ ատեստավորվող քաղծառայողը: Այսպիսի փոփոխությունը նպատակ ունի մրցույթների կամ ատեստավորման գործընթացում գիտելիքի, հմտության եւ կարողությունների ստուգման պրոֆեսիոնալ, իրավասու, պատասխանատու մասնակցությունը:



Իսկ մեր կարծիքով սա պարզապես լեգալացնում է մինչեւ այժմ եղած դե ֆակտո իրավիճակը, երբ հիմնարկների ղեկավարներն իրենք արդեն նախապես բարեխոսած են լինում ինչ-որ մեկի, հաճախ իրենց աշխատակցի համար՝ նախօրոք կանխորոշելով մրցույթի ընթացքը, որն առհասարակ կփակի դրսից քաղծառայության համար դիմողների համար այնուամենայնիվ մնացած փոքրիկ ճեղքերը: Հանձնաժողովը դրական եզրակացություն տվեց նախագծին, որը կընդգրկվի ութերորդ նստաշրջանի առաջիկա քառօրյայում:

Մ. Խ.

# Քաղցկեղը «չի ճանաչում» երկիր ու ազգություն

**Ամեն տարի Հայաստանում գրանցվում է կրծքագեղձի քաղցկեղի շուրջ 800 նոր դեպք: Այս մասին ասել է Վ. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնի կրծքագեղձի քաղցկեղի բաժանմունքի վարիչ Մարտին Միրաքյանը: News. am-ի փոխանցմամբ՝ կրծքագեղձի քաղցկեղով հիվանդանում են հիմնականում 50-55 տարին լրացած կանայք՝ չնայած հիվանդությունը կարող է զարգանալ շատ ավելի վաղ տարիքում: Մարտին Միրաքյանը կանանց խորհուրդ է տալիս կրծքագեղձի քաղցկեղից խուսափելու համար 40 տարեկանից հետո հետազոտվել տարին մեկ անգամ, իսկ 30-ն անց կանայք պետք է հետազոտվեն 2 տարին մեկ:**

**Խոսելով կրծքագեղձի քաղցկեղի տարածման համաշխարհային միտումների մասին՝ բժիշկը նշել է, որ հիվանդությունը չի խնայում ոչ զարգացած, ոչ էլ զարգացող երկրների կանանց: Կանացի օնկոլոգիական հիվանդությունների շարքում կրծքագեղձի քաղցկեղն այսօր զբաղեցնում է առաջին տեղը, այնինչ 15-20 տարի առաջ զբաղեցնում էր 4-րդ տեղը:**

Ի. Պ.

# Մեդվեդեւն ու Ալիեւը Արցախի հարցի մասին ոչինչ չեն ասել

*1-ին էջից*

**Ամեն դեպքում, հետաքրքրական է, որ Ալիեւն ու Մեդվեդեւն իրենց առանձնազրույցին հետեւած համատեղ ասուլիսի ելույթներում ընդհանրապես չեն նշել, թե քննարկել են ղարաբաղյան հարցը: Փոխարենը երկուստեք ընդգծվել է ստորագրված երեք փաստաթղթերի կարեւորությունը:**

**Ստորագրվել է պայմանագիր Ադրբեջանի եւ Ռուսաստանի պետական սահմանի մասին՝ Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի սահմանների հատվող կետից մինչեւ Կասպից ծով: Ստորագրվել է նաեւ համաձայնագիր սահմանային Սամուր գետի ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման եւ պահպանման մասին: Եվ, ի վերջո, կարեւորությամբ երրորդ համաձայնագիրը վերաբերում է Ադրբեջանից Ռուսաստան 2011-2012 թթ. գազի մատակարարման ծավալների մեծացմանը:**

**Ըստ վերջին համաձայնագրի՝ գազի մատակարարման ծավալները կհասցվեն մինչեւ 2 մլրդ խմ տարեկան: Այս առնչությամբ Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերը հայտարարել է, որ Ադրբեջանից Ռուսաստան գազի եւ նավթի մատակարարման ծավալները նախնականի համեմատ կմեծանան մինչեւ չորս անգամ:**

**Այսքանը, առանձնակի ուրիշ ոչինչ չի հաղորդվում Ռուսաստանի նախագահի պաշտոնական այցելությունից Բաքու, բացի նաեւ այն հաղորդագրություններից, թե Մեդվեդեւին շնորհվել է Բաքվի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում, ինչպես նաեւ Ռուսաստանի նախագահին են հանձնվել ադրբեջանական մաքսավորների հայտնաբերած եւ առգրավված հինգ ուղղափառ սրբապատկերներ:**

Հ. Գ. Մեդվեդեւի այցը Բաքու մեկնարկեց սեպտեմբերի 2-ին՝ Արցախի անկախության հռչակման օրը, բայց երկու նախագահներն էլ նախընտրել են ոչինչ չասել ղարաբաղյան հարցի մասին:

ԺԱՄԱՌՈՏ

# «Եթե մեզ պատերազմ պարտադրեն՝ պատրաստ ենք պաշտպանել մեր երկիրը»

**«Եվրոպայի ժողովրդավարական երիտասարդական համայնք» կազմակերպությունը միավորում է 60 երկրի կուսակցությունների երիտասարդական թեւերը: Կազմակերպության անդամակցում է նաեւ ՀՀԿ-ի երիտասարդական թեւը: Այս կազմակերպության 11 երկրի 18 ներկայացուցչի հետ երեկվա հանդիպմանը Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը, ի թիվս այլ թեմաների, խոսել է նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին: Նա նշել է, որ խնդիրը պետք է լուծվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, խաղաղ ճանապարհով. «Մինչդեռ Ադրբեջանը շարունակում է ռազմատենչ հայտարարություններ անել: Մենք պատերազմ չենք ուզում, բայց եթե Ադրբեջանի իշխանությունները մեզ պատերազմ պարտադրեն, պատրաստ ենք պաշտպանել մեր երկիրն ու ժողովրդին եւ ԼՂ պետությունը», ասել է նա:**

Մ. Խ.

# Սեմնեբին վաղը կժամանի Բաքու

**Հարավային Կովկասի հարցերով Եվրոմիության հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբին վաղը երկօրյա այցով կժամանի Բաքու: Նա խորհրդատվական հանդիպումներ է ունենալու Ադրբեջանի իշխանությունների քաղաքական-հասարակական շրջանակների ներկայացուցիչների հետ: Մասնավորապես՝ արծարծվելու են Հարավային Կովկասի եւ Ադրբեջանի վերջին շրջանի իրադարձությունները:**

# Հրանտ Մարգարյանը՝ ՀՅԴ-ի ընդդիմություն լինելու մասին

**ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի կարծիքով՝ հասարակության քաղաքականացված հատվածը հասկանում է ՀՅԴ-ին. «Մենք ընդդիմություն ենք նոր իշխանություն ձեւավորելու համար, մենք ընդդիմություն չենք՝ քանդելու համար: Մենք ընդդիմություն ենք իշխանության, բայց ոչ երկրին»: ՀՅԴ-ն Հայաստանի ինքնիշխանությունը հարցականի տակ դնող, արտաքին ուժերին Ղարաբաղի հարցում հայկական կողմին հնարավորություն տվող որեւէ քայլի չի գնա, իսկ թերահավատները կարճ ժամանակում կհամոզվեն, որ դեպի ընդդիմություն ամենահիմնավոր քայլեր անողն ՀՅԴ-ն է. «Դրա համար էլ, երբ ժողովրդի քննադատությունը մեզ է ուղղվում, խոսվում է ակնկալիքների մասին, ավելի մեծ ակնկալիքների մասին: Չի խոսվում մեր սխալների մասին, եւ դա արդեն մեծ փաստ է, որովհետեւ այլ ուժերին քննադատում են արածի համար, մեզ քննադատում են, որովհետեւ իրենց ակնկալիքներն ավելի մեծ են», ասել է Հրանտ Մարգարյանը:**

Մ. Խ.

# Կոտայքի մարզպետը պաշտոնի շուրջը

Վերջին օրերին տարածվող լուրերի համաձայն՝ Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգելդյանին շուտով այդ պաշտոնում կփոխարինի Աբովյանի քաղաքապետ Կարապետ Գուլոյանը, որը ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի փեսան է եւ ԱԺ պատգամավոր Մուրադ Գուլոյանի որդին: Չնայած պաշտոնապես թե՛ ԲՀԿ-ից, թե՛ պետական կառույցներից այս լուրը հերքում են, սակայն դրա շրջանառությունը դրանից չի դադարում: Ի դեպ, մամուլում նաեւ տեղեկություն կար, որ Կոտայքի մարզպետի թեկնածուների մեջ տրվում է նաեւ փոխոստիկանապետ Սաշիկ Աֆյանի անունը:

# Դասական հայց ընդդեմ քաղաքապետի

Ավելի քան 100 ստորագրությամբ դասական հայցն ընդդեմ Երեւանի քաղաքապետի շուտով կներկայացվի վարչական դատարան: Կոլեկտիվ դատավարությանը միացել են Երեւանի քաղաքացիներ, ուսանողներ, մտավորականներ, բնապահպաններ, ակադեմիկոսներ եւ գիտնականներ: Հայցվորների շարքում են բնապահպան Կարինե Դանիելյանը, երգիչ Ռուբեն Հախվերդյանը, ԵՊՀ պրոֆեսոր Ալեքսանդր Մանասյանը, ԳԱԱ ակադեմիկոսներ Վլադիմիր Բարխուդարյանը, Գեւորգ Բրուտյանը, Ադոլֆ Մանթաշյանը, Վիլեն Հակոբյանը:

«Մենք ենք այս քաղաքի տերը» նախաձեռնության անդամների ներկայացրած հայցի համաձայն՝ «Ուսանողական այգում» շինարարական աշխատանքների թույլտվության պարագայում խախտվել են սահմանադրության մի շարք հոդվածներ: Մասնավորապես սահմանադրության 33.2 հոդվածը՝ առողջությանը եւ բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքը, 33-րդ հոդվածը՝ հանգստի իրավունքի վերաբերյալ, եւ քաղաքաշինական գործունեության իրականացման ընթացքում հասարակության մասնակցության իրավունքը:

Համահայցվորները վարչական դատարանից պահանջում են 2010 փետրվարի 19-ին եւ փետրվարի 16-ին «Ուսանողական այգու» տարածքում շինարարության թույլտվությունները ճանաչել անվավեր:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Թուրքիան պետք է ճանաչի հայերի կոտորածների փաստը եւ ներողություն խնդրի: Նկատի ունենալով Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումն ու արձագանքելով հենց այդ առնչությամբ հնչած հարցին՝ իր անձնական կարծիքը երեկ հայաստանյան մի քանի լրատվամիջոցների լրագրողների մասնակցությամբ անցկացվող սեմինարում ներկայացրեց արդեն մի քանի օր Երեւանում գտնվող թուրք քաղաքագետ Ջաֆեր Յորուքը:

հենց բնակվում են այդ հողերի վրա: Այստեղ առավել հետաքրքրական է, որ նման վախի հիմքում այն մոտեցումն է, թե ներկայիս բնակիչները «տիրացել են հայերի ունեցվածքին, ուրեմն եւ ճանաչման դեպքում պետք է վերադարձնեն»:

Այս համատեքստում Ջաֆեր Յորուքը հիշեցրեց Աթաթուրքի 1922թ.-ին Կիլիկիայի գյուղացիների հետ հանդիպումներից մեկը, որտեղ նրան հարցրել են, թե արժե՞ սկսել հողի մշակումը, երբ դեռ չգիտեն՝

է ու վախը, որ այդ մերժվող հասարակությունը կարող է վերադառնալ:

Իսկ որ Թուրքիայում Սեւրի պայմանագրի առնչությամբ եւս ֆոբիա կա, գաղտնիք չէ: Ըստ Յորուքի՝ նման մի վախ էլ ձեւավորվում է Եվրոմիությանն անդամակցության մերձեցմանը զուգահեռ, քանի որ թուրք հասարակությունում դա ներկայացվում է որպես Թուրքիան Քուրդիստանի եւ Հունաստանի միջեւ բաժանված տեսնելու հե-

# Հայերի վերադարձը՝ թուրք հասարակության ֆոբիա Սեւրի պայմանագրի հետ միասին

Իզմիրի Տնտեսագիտական համալսարանի ԶԼՄ եւ քաղաքագիտության դոկտոր Ջաֆեր Յորուքը Երեւանում է «Եվրասիա» համագործակցության հիմնադրամի հրավերով: Յորուքի հետազոտական հետաքրքրությունները ներառում են ինքնիշխանության, հոգեվերլուծության եւ դատողական վերլուծության խնդիրները:

«Թուրք հասարակությունն ու դրա վախերը» թեմայի առնչությամբ իր տեսակետները Ջաֆեր Յորուքը երեկ ներկայացնում էր «Զրույցներ Թուրքիայի մասին» սեմինարի ընթացքում, որն իրականացնում է «Եվրասիա» համագործակցություն հիմնադրամը՝ Ստամբուլի «Գլոբալ քաղաքական միտումներ կենտրոնի» (GPoT) հետ մեկտեղ եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ:

Ցեղասպանության հարցի առնչությամբ Յորուքը, ներկայացնելով ճանաչման անհրաժեշտությունը, անհրաժեշտ համարեց նաեւ ընդգծել, որ իր կարծիքը որեւէ ազդեցություն չունի, ինչպես նաեւ, որ Թուրքիայի կրթված, ուսյալ ներկայացուցիչների մեջ շատ քչերն են այդ կարծիքին: Տվյալ դեպքում գործում է այն ֆոբիան կամ վախը, թե ցեղասպանության ճանաչմանը կհետեւեն հայերի հողատիրական պահանջները, այսինքն՝ հայերը կարող են վերադառնալ:

Սա, ըստ Յորուքի, ոչ միայն հոգեբանական, այլեւ տնտեսական վախ է առաջացնում Թուրքիայի հատկապես Անատոլիայի շրջանի բնակչության, նաեւ քուրդ բնակչության մեջ, քանի որ վերջիններս էլ կվերադառնա՞ն արդյոք հայերը: Աթաթուրքն իր հպատակներին վստահեցրել է, թե «հայերն այս փառապանծ երկրում տեղ չունեն»:

Ընդհանուր առմամբ, թուրք հասարակությունը վախերից բաժանված է երկու հիմնական մասի. մի կողմից, հասարակության մի հատվածը վախենում է իսլամիստական արմատներին ու իրականությանը վերադառնալուց, մյուս հատվածն էլ դեմ է աշխարհիկությանն ու վախենում է դրանից: Այստեղ առանձնակի հատկանիշ է, որ փաստացի մի հատվածի երազանքը, թե երկիրը լինի իսլամիստական, մյուս հատվածի համար մղձավանջ է եւ հակառակը: Եվ հակադրության մեջ զգալի դերակատարություն ու մասնակցություն ունեն նաեւ լրատվամիջոցները:

Իսկ թե ինչու երկատված հասարակությունը վերջնականապես չի պառակտվում, Յորուքի մեկնաբանությամբ, երկատմանը նպաստող վախերի նման, պարզվում է, կան նաեւ միավորող ֆոբիաներ: Ամենից առաջ, անկախ մնացյալ հանգամանքներից, թուրք հասարակությունը վախենում է երկրի քրիստոնեականացումից, այդպիսով նաեւ «թուրք ինքնության կորստից»:

Այս ֆոբիայի ձեւավորման հարցում ազդեցություն ունեն նաեւ պատրիարքարանները, որոնք Թուրքիայում դիտարկվում են որպես արտաքին ուժերի կողմից Թուրքիան մասնատելու սպառնալիք: Յորուքի բացատրությամբ, քրիստոնեականացման վախի հիմքում Օսմանյան կայսրությունից ժառանգություն մնացած բազմազգ, բազմակրոն հասարակության մերժումն ռանկար:

Միավորում է թուրք հասարակությանը նաեւ վախը արտաքին ուժերից: Այս համատեքստում Ջաֆեր Յորուքը բերեց երկու օրինակ, որ առավել ցայտուն ցույց են տալիս թուրք հասարակության վերաբերմունքն ու գնահատականը հարեւանների ու ընդհանրապես արտաքին քաղաքականության առումով: Ըստ այդմ, դեռեւս 1941-ին ծայրահեղ աջ ուժերի հիմնադիր Նիհալ Աթսիզն իր որդուն ուղղված «պատգամում» գրում է. «Հետեւիր իմ խորհրդին ու լավ թուրք եղիր: Կոմունիզմը մեր թշնամու մասնագիտությունն է: Լավ իմացիր դա: Հրեաները բոլոր ազգերի թաքուն թշնամին են: Ռուսները, չինացիները, պարսիկները եւ հույները մեր պատմական թշնամիներն են: Բուլղարացիները, գերմանացիները, իտալացիները, անգլիացիները, ֆրանսիացիները, արաբները, սերբերը, խորվաթները, իսպանացիները, պորտուգալացիները, ռումինացիները մեր նոր թշնամիներն են: Ճապոնացիները, աֆղանները ու ամերիկացիները մեր ապագա թշնամիներն են: Հայերը, քրդերը, կիպրացիները, աբխազները, բոսնիացիները, ալբանները, լազերը, լեզգիները, վրացիները, չեչենները մեր ներքին թշնամիներն են: Շատ կարեւոր է, որ պատրաստ լինես պայքարելու այսքան շատ թշնամիների դեմ»:

Թվում է, թե 1941-ը բնավ էլ մոտ չէ, սակայն, ըստ Յորուքի բերած օրինակների, այսպիսի մտածելակերպը արդիական էր անգամ 70-ականներին, ու դեռ տարբեր վախերի տեսքով առկա է հասարակության կյանքում:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ

# Ժեստերի լեզվի էլեկտրոնային բառարան՝ լսողության խնդիրներ ունեցողների համար

Գյումրու հատուկ կարիքներով կանանց «Ագաթ» կենտրոն հասարակական կազմակերպությունը ստեղծել է ժեստերի լեզվի էլեկտրոնային բառարան՝ նախատեսված լսողության խնդիրներ ունեցող անձանց, հատկապես պատանի ու երիտասարդ տղաների եւ աղջիկների համար:

Ինչպես նշվեց այս բառարանի (տեսասկավառակի) սեպտեմբերի 2-ին կազմակերպված շնորհանդեսի ժամանակ, այսօր Հայաստանում 3500-4000 մարդ լսողության խնդիրներ ունեն, որոնցից 200-ը ապրում են Գյումրիում: Նրանք զրկված են մշակութային կյանքին լիարժեք մասնակցելու իրավունքից, ունեն հաղորդակցման եւ այդ պատճառով նաեւ կրթական, տեղեկատվական, առողջապահական լուրջ խնդիրներ: Առավել եւս, որ նրանցից եւ նրանց հետ անմիջաբար շփվողներից շատերը ժեստերի լեզվին հարկ եղած կերպով չեն էլ տիրապետում: Ամբողջ Հայաստանում կա այդ լեզվով ուսուցանող երկու դպրոց՝ միայն Երեւանում, եւ շատ քիչ ընտանիքներ են ի վիճակի իրենց երեխաներին ուղարկել այնտեղ սովորելու: Հայաստանում առաջին այս էլեկտրոնային բառարանը նման անձանց օգնելու մի գնահատելի քայլ է, եւ ծրագիրը, որի շրջանակներում այն իրականացվել է, այդպես էլ կոչվել է՝ «Մեկ քայլ առաջ»: Ծրագիրն իրականացվել է Սախարովի անվան իրավապաշտպան կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Էլեկտրոնային բառարանը պարունակում է մոտ 280 ժեստ՝ հայերեն բառերով եւ դրանց առկա հոմանիշներով ու հականիշներով բացատրությամբ, ներկայացված են նաեւ հայկական այբուբենը, թվերը՝ մինչեւ միլիոն, հայերեն «Հայր մեր»-ը:

Բառարանի 300 օրինակները կտրամադրվեն այն հասարակական եւ այլ կազմակերպություններին ու անձանց, ովքեր դրա կարիքն ունեն, իսկ նման պատվերներ արդեն ստացվել են Էջմիածնից, Երեւանից, Գյումրիից: Կարծում ենք՝ օգտվողների թիվն ավելի մեծ կարող է լինել, եթե բառարանը տեղադրվի նաեւ «Ագաթ» ՀԿ-ի էլեկտրոնային կայքէջում:

Ի դեպ, «Ագաթ» կենտրոնի երիտասարդ սաներից մի խումբ տղաներ ու աղջիկներ նաեւ պարում ու երգում են ժեստերի լեզվով: Կենտրոնի պատասխանատուների տեղեկացմամբ՝ նրանք Սիլվա Հակոբյանի հրավերով հոկտեմբերի 16-ին մասնակցելու են երգչուհու մենահամերգին, որտեղ հանդես են գալու են վալսով:

Գ. Մ.




# ՀԱԿ-ում նախապատրաստական աշխատանքներ են. նվաճելու են Ազատության հրապարակը

**Հայ ազգային կոնգրեսի սեպտեմբերի 17-ին կայանալիք հանրահավաքը Ազատության հրապարակում անցկացնելու դիմումը քաղաքապետարանը մերժել է:**

**ՀԱԿ-ում դա բնութագրում են ապօրինի ու մտածում Ազատության հրապարակը վերանվաճելու մասին: Սակայն մինչ նվաճման գործընթացի մեկնարկը նրանք իշխանությանը բանական ժամկետ կտան հարցը լուծելու համար: Թե բանական ժամկետները որո՞նք են եւ ե՞րբ են ավարտվելու՝ Զուրաբյանը չմանրամասնեց: Սեպտեմբերի 17-ի հանրահավաքն էլ կանցկացնեն իրենց ավանդական վայրում՝ Մատենադարանի դիմաց, այդ ընթացքում ամենօրյա հայտեր կներկայացնեն Ազատության հրապարակում հանրահավաքներ անցկացնելու համար, դասական կարգով կվիճարկեն հանրահավաքը մերժելու որոշումներն ու միջազգային կառույցներին դիմումներ կգրեն:**

**Ինչպես միշտ, այս անգամ էլ հանրահավաքից առաջ Զուրաբյանը խոսացավ անակնկալներ, վճռականություն, պայքար: Գլխավոր ինտրիգն էլ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթն է, որի խոսքում կլինեն անակնկալներ, նոր շեշտադրումներ: Հերթական վճռական հանրահավաքից հետո պայքարը կստանա նոր ընթացք, որովհետեւ այժմ ընդդիմության ձեռքերն ավելի ազատ են: Իշխանությունն, ի տարբերություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի, հայ-թուրքական հարաբերությունների օրինակով արտաքին նախաձեռնությամբ հանդես չի գալիս, որը կպայթեցներ ավանդական պատկերացումները, կշեղեր հասարակության ուշադրությունն ու օրակարգը կձեւավորվեր դրա շուրջը: Հետեւաբար, երբ օրակարգային խնդիրներ չկան, ապա ՀԱԿ-ն ավելի ազատ է գործելու: Սակայն պետք է հավելենք, որ նախորդ տարի, ինչպես իրենք են ասում, ՀԱԿ-ն ավելի ազատ չէր գործում, որովհետեւ իրենց ներսում համախմբված քաղաքական ուժերը բոլորի ու ամեն ինչ կապակցությամբ տարբեր կարծիքներ ունեին, որոնք հաճախ առաջնորդի տեսակետին չէին համապատասխանում, եւ այդ ժամանակ իշխանության համար պայքարելու փոխարեն նրանք սկսում էին ներսում իրենց գաղափարական հարցերը լուծել: Սակայն ՀԱԿ-ում արված «չիստկաներից» ակնհայտ դարձավ, որ այստեղ խոսում է մեկը, մնացածը լսում եւ ծափահարում են. նման միջավայր պահպանվում է նաեւ այլ կուսակցություններում:**



**Անդրադառնալով սպասվող երրորդ ուժի ձեւավորմանն ու այդ ֆոնի վրա Ռոբերտ Քոչարյանի՝ քաղաքականություն վերադարձին, Զուրաբյանն ասաց, որ երկու տարի այդ խոսակցությունները լսում է, բայց ուժն այդպես էլ չի ստեղծվում: Ընդհանուր առմամբ ՀԱԿ-ում հանգիստ են վերաբերվում նոր ձեւավորվող ուժի վերաբերյալ խոսակցություններին:**

**Եթե ուժն իրենց կաջակցի բռնապետության դեմ պայքարում, ապա կողջունեն, իսկ եթե ծառայի բռնապետության դեմ պայքարը շեղելուն, կբացահայտեն նոր ուժի դեմքն ու ամեն ինչ կասեն դրա մասին:**

**Հ. Հ.**

# ՀԱԿ-ին իրականում բուն հանրահավաքը չի հետաքրքրում. Հայկ Բաբուխանյան

**- ՀԱԿ-ին իրականում ոչ թե բուն հանրահավաքն է հետաքրքրում, ժողովրդին ինչ-որ բան հասցնելը, գաղափարախոսությունը, այլ բացառապես հնարավորին աղմկահարույց սկանդալներ, քաշքշուկներ, ծեծկռտուք հրահրելը, որպեսզի անպայման ձերբակալվածներ լինեն, որոնց հարցը հետագայում պարբերաբար, որքան հնարավոր է երկարատեւ շահարկեն, նրանց անունը քաղբանտարկյալ դնեն կամ ամպագոռգոռ այլ որակումներ տան, ավելին՝ ցույց տան եվրոպական տարբեր չինովնիկների՝ սեփական երկիրն առավելագույնս վարկաբեկելու նպատակով, - մեր թղթակցի հետ զրույցում ասաց ՍԻՄ նախագահ Հայկ Բաբուխանյանը՝ անդրադառնալով ՀԱԿ-ի հետեւողական պայքարին՝ առաջիկա հանրահավաքն անցկացնել Ազատության հրապարակում: Նրա համոզմամբ, Լեւոն Տեր-Պետրոսյանի ու իր թիմի համար շատ ցանկալի կլիներ, եթե նշյալ ընդհարումներից նաեւ զոհեր լինեն, ինչպես եղավ մարտի 1-ին: Բաբուխանյանի համոզմամբ, մարտի 1-ի իրադարձությունների զոհերի առաջին մեղավորը Լեւոն Տեր-Պետրոսյանն է:**

Tert.am

# «Վուդրո Վիլսոն կենտրոնը» սրբապղծում է իր անվանակցի ժառանգությունը

***Այսպես է գնահատում ամերիկահայ անկախ լրագրող Դավիթ Բոյաջյանը վերոնշյալ կենտրոնի հասարակական ծառայությունների մրցանակը այս տարվա հունիսին Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուին շնորհելու որոշումը: Ստորեւ՝ թարգմանաբար հատվածներ ՌԱԿ Բոստոնում հրատարակվող «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթում տպագրված նրա ընդարձակ հոդվածից, որտեղ մանրամասնություններ է ներկայացնում այդ կենտրոնի գործունեության եւ ֆինանսավորման աղբյուրների մասին:***

***Հոդվածը տպվել է վերոհիշյալ թերթի մայիսի 15-ին, սակայն փոստային ուշացման պատճառով մեր ձեռքն անցավ օրերս: Այնուամենայնիվ, ո՞րն է պատճառը շուրջ 3,5 ամիս հետո այն մեր ընթերցողներին ներկայացնելու: Առաջին՝ հոդվածագրի հմտությունն ու բծախնդրությունը, որին այնքան քիչ ենք հանդիպում մեր մամուլում՝ Հայաստան թե Սփյուռք: Երկրորդ՝ այն հետաքննական աշխատանքը, որը կատարել է հոդվածագիրը «Վուդրո Վիլսոնի կենտրոնին» նյութապես աջակցող ֆինանսա-տնտեսական մեծագույն ընկերություններին բացահայտելու նպատակով: Դրանք այն ընկերություններն են, որոնք միշտ եւ բոլոր մակարդակներում թուրքամետ դիրքորոշում ունեն: Երրորդ՝ նույն՝ «Վուդրո Վիլսոն կենտրոնի» կատարած տխուր դերակատարությունը Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ, որը միամիտ հայերիս համար բացահայտում է Դավիթ Բոյաջյանը:***

***Մյուս կողմից, ավելորդ չէ այստեղ վերհիշել, թե հանրապետության նախագահը Ս. Սարգսյանը կատարած իր վերջին այցելության ընթացքում եղավ նաեւ «Վուդրո Վիլսոն կենտրոնում» եւ հարգանքի տուրք մատուցեց Վուդրո Վիլսոնի հիշատակին, իսկ ընդամենը երկու շաբաթ հետո նույն կենտրոնի ղեկավարությունը մրցանակ շնորհեց Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուին:***

Վստահաբար՝ ԱՄՆ-ի 28-րդ նախագահ (1913-21 թթ.) Վուդրո Վիլսոնը (1856-1924) այն աշխարհից սարսափով է նայում այն ամենին, ինչ իր անունը կրող կենտրոնը կատարում է իր անունից: Ամերիկացիներից շատերը հավանաբար տեղյակ էլ չեն Վաշինգտոնում գտնվող այդ կենտրոնից, ոչ էլ այն փաստից, որ դրա մուլտիմիլիոն դոլարի հասնող տարեկան բյուջեի մեկ երրորդը գոյանում է իրենց պետությանը մուծած հարկերից:

Վիլսոնյան կենտրոնը հիմնվել է Կոնգրեսի կողմից 1968-ին՝ հավերժացնելու համար հանգուցյալ նախագահի «իդեալները, մտահոգությունները ու ձեռքբերումները»: Սակայն մի շարք անհամապատասխան քայլերով կենտրոնը խախտել է իր «կոնգրեսական մանդատը»: Վիլսոնին նվիրված «Հիշատակի հավերժացման օրենքում» նշվում է, որ կենտրոնը «լրջորեն է վերաբերվում Վիլսոնի գաղափարներին» եւ պարտավորվում է ստանձնել եւ «շարունակել նրա պատմական առաքելությունը»: Իրականում, սակայն, կենտրոնը գիտակցորեն անտեսում է նրա (Վիլսոնի) գաղափարները եւ աչք փակում պատմության առաջ, որոշելով «Վուդրո Վիլսոնի մրցանակը շնորհել Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուին:

Տարօրինակ էր, որ կենտրոնը տողերիս հեղինակին այդ մասին մամլո հաղորդագրություն չտրամադրեց, եւ մենք դրա մասին իմացանք թուրքական լրատվամիջոցներից:

«ՎՎԿ»-ի պրեզիդենտ (տնօրեն), նախկին կոնգրեսական **Լի Համիլտոնը** (ով վերջերս հայտարարեց, որ շուտով կհեռանա այդ կազմակերպությունից) նշել է, որ Դավութօղլուն «մարմնավորում է այն բոլոր հատկությունները, որ մենք կենտրոնում գնահատում ենք», եւ «կատալիզացրել է» թուրքական քաղաքականությունը:

Պարզապես զարհուրելի է, որ Վիլսոնի նման վեհ անձնավորության անունը կրող կենտրոնը պատվի արժանացնի բարձրաստիճան անձնավորությանը մի այնպիսի երկրի, որ մարդու իրավունքների խախտման երկար պատմություն ունի: Ավելին, Դավութօղլուի վարած քաղաքականությունը ուղիղ հակապատկերն է Վիլսոնի «իդեալների եւ մտահոգությունների»: Նրա զայրույթի պոռթկումները հայերի ցեղասպանությունը կոնգրեսական լսումների վերաբերյալ հայտնի են բոլորին: Նա հետ կանչեց ԱՄՆ-ում իր դեսպանին եւ Ներկայացուցիչների պալատի որոշումը իր երկրի «պատվին ուղղված վիրավորանք» համարեց, կարծես Թուրքիայի ժխտողականությունը պատվաբեր արարք լիներ: Իշխող կուսակցության բարձրաստիճան մի պաշտոնյա սպառնաց «բոլոր մակարդակներով ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների վատթարացում, սկսած Աֆղանստանից մինչեւ Իրաք, Պակիստան եւ Մերձավոր Արեւելք»:

Դավութօղլուն նույն պոռթկումը ցուցաբերեց Շվեդիայի խորհրդարանի համապատասխան որոշման առիթով: Ոչ մի ուրիշ դաշնակից ԱՄՆ-ին այդքան հաճախ չի սպառնացել, որքան Թուրքիան: Այս քայլերո՞վ է «կատալիզացնում» Դավութօղլուն իր երկրի քաղաքականությունը եւ նման «հատկություննե՞րն» են գնահատում վերը նշված կենտրոնում:

Հիշեցնենք նաեւ, որ Դավութօղլուն երկու տարի առաջ իր երկիր հրավիրեց եւ պատվեց Սուդանի նախագահ Օմար էլ Բաշիրին, որին միջազգային հանրությունը մեղադրում էր իր երկրում ցեղասպանություն կատարելու մեջ: Նա անցյալ տարի եւս հրավիրել էր Բաշիրին, բայց միջազգային ճնշումների տակ այցելությունը տեղի չունեցավ: Այս բոլորին զուգահեռ Թուրքիան Դավութօղլուի արտգործնախարարության ներքո չի զլանում ուրիշ երկրներին մեղադրել (Իսրայելին, Չինաստանին) ցեղասպանության մեջ:

Թուրքիան առաջին հերթին պետք է ճանաչեր հայերի, ասորիների, հույների եւ քրդերի դեմ կատարած իր ցեղասպանությունները, պետք է վերջ տար Կիպրոսի հյուսիսային մասի 36 տարվա օկուպացմանը կամ Հայաստանի սահմանի 1993 թվից շրջափակմանը: Դավութօղլուի Թուրքիան հաստատ գործում է հակառակ Վիլսոնի թողած վեհ գաղափարների եւ դրանով իսկ սրբապղծում նրա պայծառ անունը:

### Թուրքական կորպորատիվ գումարներ

Վիլսոնյան կենտրոնի ֆինանսավորման աղբյուրները հետազոտելիս պարզ դարձավ, որ կենտրոնը գործում է կորպորատիվ գումարների (այդ թվում՝ թուրքական) հաշվին: Այդ գումարները հայթայթող ընկերությունների թվին են պատկանում «Բոյնգը», «BAE եւ Շեւրոն», «Ալկոա», «Բոմբարդիըր եւ Հոնիվել» (օդային տարածքների արդյունաբերության ասոցիացիայի անդամներ), «Բեխտել», «Կոկա-կոլա» եւ «Էքսոն-մոբիլ» ընկերությունները, որոնք այսպես կոչված «վիլսոնյան դաշնության» անդամ լինելով, Կոնգրեսին դիմել են՝ «տապալելու հայերի ցեղասպանության N 252 բանաձեւը»:

Դրանց մի մասը «Ամերիկա-թուրքական խորհրդին» (ԱԹԽ) անդամավճարներ մուծող ընկերություններ են: ԱԹԽ-ն իրեն համարում է «Գործարար ասոցիացիա» եւ ներառում է 100-ից ավելի թուրքական եւ ամերիկյան կորպորացիաներ: Ղեկավար պաշտոններում մոտ 100 թուրքեր եւ ամերիկացիներ են, որոնց բոլորն էլ նախկինում զբաղեցրել են կառավարական կամ զինվորական բարձրաստիճան պաշտոններ: Գործադիր կոմիտեի նախագահն է նախկին գեներալ-լեյտենանտ Բրենտ Սքոուկրոֆտը, որը Կոնգրեսին ասել էր, թե այն, ինչ պատահել է հայերին, «խիստ վիճելի է»: ԱԹԽ-ի անդամ է նաեւ «Լոքհիդ-Մարտին կորպորացիան», որը նույնպես դեմ է արտահայտվել հայկական բանաձեւին: «DLA փայփըր»-ը իրավական եւ կորպորատիվ ծառայությունների միջազգային ընկերություն է, որը ձեւակերպված է ամերիկյան կառավարությունում որպես «արտասահմանյան գործակալություն», որն աշխատում է ի նպաստ Թուրքիայի»: Նրանում աշխատող Իգնացիո Սանչես իրավաբանը ԱՄՆ Կոնգրեսում ներկայացնում է «ազգային (տեղացի) եւ միջազգային հաճախորդներին»: Նա նաեւ ընդգրկված է «Վիլսոնյան կենտրոնի» հոգաբարձուների վարչությունում: «DLA փայփըր»-ը կապ ունի նաեւ «Լիվինգստոն գրուպ»-ի հետ, որի ղեկավարն է խորհրդի նախկին խոսնակ Ռոբերտ Լիվինգստոնը, ով բազմիցս գործել է ընդդեմ հայերի:

«DLA փայփըր»-ը միաժամանակ մարտավարական դաշնակիցն» է «Քոհեն գրուպի», որի ղեկավարն է պաշտպանության նախկին նախարար Ուիլյամ Քոհենը, իսկ փոխնախագահն է Մարկ Գրոսմանը, որը Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանն է եղել 1994-97 թվերին: Նա գուցե նախկին դիվանագետների մեջ Թուրքիայի ամենաթունդ պաշտպաններից է: Ներկայումս նա դարձել է «Վիլսոնյան կենտրոնի» հասարակական քաղաքականության խորհրդատուներից մեկը եւ «Դիվանագիտության ամերիկյան ակադեմիայի» վարչության անդամը:

Հիշենք, որ նախկին պաշտպանության նախարար Ուիլյամ Քոհենն ու նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթը նախագահում էին «ցեղասպանությունների կանխման աշխատանքային ծրագիրը», հակառակ որ որպես քաղաքացիներ երկուսն էլ դեմ էին հայերի ցեղասպանության ճանաչման բանաձեւերին:

### Հասարակական ծառայություններ աշխարհի՞ն

«Վիլսոնյան կենտրոն»-ի հաղորդակցությունների բաժնի տնօրեն Շերոն Քոլմեն Մկքարտերը հեռախոսային զրույցում նշեց, որ կենտրոնը Թուրքիայի արտգործնախարարին պատվում է նաեւ «իր երկրին եւ աշխարհին մատուցած հասարակական ծառայությունների» համար: Թուրքիան կամ թուրքերը կարող են հավանել իրենց արտգործնախարարի արարքները, բայց ի՞նչ է արել նա ի նպաստ աշխարհի: Նրա գործելակերպի վերոնշյալ հակիրճ թվարկումն անգամ բավական է ասելու, որ նա ոչինչ չի արել:

Տիկին Շերոնը նաեւ նշեց, որ Դավութօղլուն համապատասխանում է «վիլսոնյան ավանդույթների» պահանջներին այն առումով, որ նա ե՛ւ «ակադեմիական շրջանակներում է եղել, ե՛ւ ներկայումս կառավարական ծառայության մեջ է», ուստի ինքնաբերաբար դառնում է «վիլսոնյան» եւ արժանի է համարվում կենտրոնի մրցանակին: Սա ուղղակի անհեթեթ տրամաբանություն է:

Իսկ ովքե՞ր են եղել նախկինում այդ մրցանակին արժանացածները: Մեծ մասամբ ամերիկացի բարերար-մարդասերներ, բժիշկներ, Կոնգրեսի անդամներ, դիվանագետներ, ճարտարագետներ եւ դերասաններ, նրանց թվում՝ Ջեյմս Բեյքերը, դոկտ. Դենտոն Քուլին, Բետտի Ֆորդը, Ջոն Գլենը, դեսպան Հովարդ Լիչը, Ջանեթ Նապոլիտանոն, գեներալ Քոլին Փաուելը (եւ նրա կինը), Էնդրյու Լոյդ Վեբերը եւ Էնդրու Յանգը: Արտասահմանյան գործիչներից՝ Հնդկաստանի նախագահ Աբդուլ Քալամը եւ այլ անձնավորություններ Բրազիլիայից եւ Հարավային Կորեայից:

### Սմիթսոնյան հաստատությունը եւ ԱԹԽ-ն

Եթե ավելի խորանանք, կտեսնենք, որ «Վուդրո Վիլսոն կենտրոնին» ծնունդ տվողը հայտնի «Սմիթսոնյան հաստատությունն է», որի մեկ միլիարդի հասնող բյուջեի երեք քառորդը գոյանում է ամերիկացիների հարկերից: Հաստատությունը նույնպես «Ամերիկա-թուրքական խորհրդի» (ԱԹԽ) անդամ է, հակառակ որ ստեղծված է հարգալից վերաբերվելու եւ պաշտպանելու Ամերիկայի բազմաշերտ էթնիկական ժառանգությունը եւ պատշաճը մատուցելու մեր երկրի (Ամերիկայի) պատմությանը, որի մի մասն են կազմում նախագահ Վիլսոնի՝ հայերին նեցուկ կանգնելու եւ Թուրքիային ցեղասպանության մեջ մեղադրելու փաստերը: «Սմիթսոնյանները» ոչ մի պատճառ չունեն անդամակցելու «Ամերիկա-թուրքական խորհրդին»: Նրանք պարտավոր են դուրս գալ այդ թուրքամետ քարոզչական ապարատից:

Իսկ ցեղասպանության ճանաչված գիտնականներն ու մասնագետները պարտավոր են կենտրոնի որոշման դեմ բարձրաձայնել եւ նույնիսկ հանդես գալ «Վիլսոն եռամսյայի» էջերում: Կենտրոնն էլ պետք է գործի համապատասխան Վիլսոնի «իդեալներին եւ մտահոգություններին»:

**Պատրաստեց**
**ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

---

ՍՏԱՄԲՈՒԼ

## 20 տարի՝ սպանության համար

### *28 տարի՝ այդ մասին գիրք գրելու համար*

«Ակօս» շաբաթաթերթի խմբագրի՝ Հրանտ Դինքի սպանությունից ավելի քան երկու տարի անց մի թուրք լրագրողի 28 տարվա բանտարկություն է սպառնում այդ սպանության հանգամանքների մասին գիրք գրելու համար, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը՝ լուրը քաղելով Ստամբուլի «Հյուրիեթից»:

Բանտարկության նշված ժամկետը 8 տարով ավելի է, քան բուն սպանության մեջ կասկածյալին սպասող պատիժը:

«Դինքի սպանությունը եւ հետախուզական մարմինների ստերը» գրքի հեղինակը «Միլլիեթ» օրաթերթի լրագրող Նեդիմ Սեները է, որն իր հետազոտության նյութ է դարձրել անվտանգության մարմինների թերացումները ինչպես Դինքի սպանությունից առաջ, այնպես էլ դրանից հետո: Նրա դեմ դատական հայց են ներկայացրել մեկ ոստիկան եւ երեք ղեկավար աշխատողներ: Սեներին մեղադրում են գաղտնի տեղեկությունների հրապարակման եւ ահաբեկչության դեմ պայքարողներին թիրախ դարձնելու մեջ:

Օգոստոսի սկզբներին՝ դատական առաջին լսումներից առաջ, խոսելով «Անատոլիա» լրատու գործակալության ներկայացուցչի հետ, լրագրողը իրեն պաշտպանել է, ասելով, որ գրքում ներառված տեղեկությունը զետեղված է ինտերնետում, եւ «Գուգըլի» միջոցով որեւէ մեկը կարող է ձեռք բերել: Նա ավելացրել է, որ դատավարությունը տեղի է ունենում Ստամբուլի երկրորդ դատարանում, եւ գաղտնիքը քողազերծելու համար նրան 8 տարի բանտարկություն է սպասում, իսկ մյուս մեղադրանքի համար՝ 20 տարի: Դատարանում նա խնդրել է իրեն մեղավոր չճանաչել: Դատավորը որոշել է հետաձգել դատավարությունը, որպեսզի կողմերը ավելի լավ ծանոթանան գործին:

«Մենք դատավարությանը ներկա էինք ոչ միայն Սեներին, այլեւ Թուրքիայում մամուլի ազատությանը պաշտպանելու նպատակով», ասել է «Միլլիեթի» գլխավոր խմբագիր Սեդաթ Էրգինը «Անատոլիա» գործակալությանը: Թուրքիայի ժուռնալիստների ասոցիացիան հայտարարություն է հրապարակել, որով իր «մտահոգություններն» է արտահայտել ինչպես տվյալ գործի, այնպես էլ ժողովրդավարական խնդիրների վերաբերյալ: «Սեների նման արհեստավարժ լրագրողների բացահայտումները հանրությանը մատուցված ծառայություններ են», նշվել է հայտարարության մեջ: Իսկ «Հյուրիեթ դեյլի նյուզ» եւ «Էկոնոմիկ ռիվյու» պարբերականների գլխավոր խմբագիր Դեյվիդ Ջադսոնն ասել է, որ «խոսքի ազատության կառույցները վերջին շրջանում որոշակի հաջողությունների հասել են, սակայն պետական մի շարք մարմիններ դեռեւս չեն հասկանում այս կարեւոր ժողովրդավարական հասկացության բնույթը: Հուսով ենք՝ նրանք էլ կհասունանան ժամանակի ընթացքում եւ կնպաստեն, որ հասարակությունը հասկանա խոսքի ազատության կարեւորությունը»:

**Հ. Ծ.**

# Մանուչեհր Մոթթաքի. «Իրանի արտաքին քաղաքականության մեջ Հայաստանը հատուկ տեղ է զբաղեցնում»

***PanARMENIAN.Net** - Իրանի միջուկային ծրագրի շուրջը ստեղծված իրավիճակը շարունակում է լարված մնալ: ՄԱԿ-ի ԱԽ-ում բանաձեւերի ընդունմանը հաջորդեցին նոր պատժամիջոցները Իրանի դեմ: Հայաստանի համար, որը բարիդրացիական հարաբերություններ ունի Իրանի հետ եւ մի շարք կարեւոր ռազմավարական նախագծեր է իրականացնում այդ երկրի հետ, հատկապես կարեւորվում են երկխոսության հաստատումը Թեհրանի ու Արեւմուտքի միջեւ եւ խնդրի խաղաղ կարգավորումը: Հայ-իրանական հարաբերությունների զարգացման հեռանկարների, տարածաշրջանային հարցերում Թեհրանի դիրքորոշման, ինչպես նաեւ ղարաբաղյան կարգավորման ասպարեզում իրանական կողմի ակտիվացման մասին **PanARMENIAN.Net**-ին է պատմել Իրանի ԱԳՆ ղեկավար Մանուչեհր Մոթթաքին:*

**- Վերջին տարիներին հայ-իրանական հարաբերություններում, հատկապես տնտեսական եւ էներգետիկ ոլորտներում նկատվում է ակտիվություն: Ինչպե՞ս եք գնահատում Երեւանի եւ Թեհրանի միջեւ քաղաքական հարաբերությունների ներկա մակարդակը:**

- Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ կարեւոր տեղ են զբաղեցնում հարեւանների հետ հարաբերությունները, եւ այս առումով Հայաստանը հատուկ տեղ է գրավում: Իրանի եւ Հայաստանի հարաբերությունները տարբեր ոլորտներում, մասնավորապես տնտեսական բնագավառում լավ զարգացում են ունեցել, եւ երկու երկրների բարձրագույն ղեկավարների այցելությունները ու ստորագրված փաստաթղթերը խոսում է այս հարաբերությունները առավել զարգացնելու հաստատուն կամքի մասին:

Միջկառավարական համատեղ հանձնաժողովի իններորդ նիստի շրջանակներում տարբեր ոլորտների վերաբերյալ ձեռք են բերվել լավ համաձայնություններ, որոնց իրագործման ուղղությամբ պետք է քայլեր կատարենք: Երկու երկրների միջեւ երրորդ՝ 400 կիլովոլտ հզորությամբ էլեկտրահաղորդիչ գծի շինարարության պայմանագրի շուրջը վերջնական պայմանավորվածությունը, ինչպես նաեւ Արաքս գետի վրա ջրամբարի եւ Մեղրիի հէկի իրականացման նախագիծը նախկինում իրագործված Իրանից Հայաստան գազի արտահանման ծրագրի կողքին կարող են առավել նպաստել երկու երկրների համագործակցության ամրապնդմանը: Հուսով եմ, որ երկու երկրների համապատասխան պաշտոնյաների համագործակցության ու օժանդակության շնորհիվ մոտ ապագայում նավթամթերքներ տեղափոխող խողովակաշար եւ Հայաստանում նավթամթերքների տերմինալ կառուցելու նախագծերի շուրջ վերջնական համաձայնության կայացման ականատեսը լինենք: Իրանի Իսլամական Հանրապետությունը պատրաստ է Հայաստանում իրականացվող տեխնիկական եւ ճարտարագիտական տարբեր նախագծերում, օրինակ հյուսիս-հարավ մայրուղու նախագծի իրագործման մեջ եւս իր նշանակալից եւ լուրջ մասնակցությունն ունենալ: Իմ համոզմամբ, հարաբերությունների ներկա մակարդակը հաստատապես եւ վստահաբար հարիր չէ երկու երկրների հարաբերություններին, եւ երկկողմ հարաբերություններում առկա են չօգտագործված շատ հնարավորություններ ու պոտենցիալ, եւ նկատի ունենալով, որ հարաբերությունների ընդլայնման համար չկա որեւէ սահմանափակում, հարկավոր է, որ պատշաճ գործողություններով եւ օգտագործելով անհրաժեշտ միջոցներ, այդ թվում երկու երկրների միջեւ ազատ առեւտրի եւ նախընտրելի տարիֆների մասին համաձայնագրերի մշակումը, երկկողմ փոխհարաբերությունները բարձրացնենք հարեւան երկրների հարաբերություններին հարիր եւ ընդունելի մակարդակի (նվազագույնը մեկ մլրդ դոլարի): Իրանի Իսլամական Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները վերջին տարիներին զգալի աճ են գրանցել, եւ դա ոչ միայն տնտեսական եւ ռազմավարական բնույթի նախագծերի իրականացման ոլորտում, այլեւ քաղաքական եւ մշակութային բնագավառներում: Վերջին տարիների ընթացքում երկու երկրների քաղաքական խորհրդակցությունները տարբեր պատվիրակությունների փոխայցելությունների եւ համատեղ հայտարարությունների ընդունման առումով զգալի եւ տեսանելի է եղել: Բացի դրանից, երկու երկրների քաղաքական ղեկավարները, ըմբռնելով տարածաշրջանային եւ տարածաշրջանից դուրս տեղի ունեցող քաղաքական զարգացումները, միջազգային համաժողովների շրջանակներում իրենց ռոտացիոն հանդիպումներում կարծիքներ են փոխանակում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող քաղաքական խնդիրների շուրջ:

**- Վերջերս տեղեկություններ տարածվեցին, որ պաշտոնական Թեհրանը ներկայացրել է առաջարկ՝ կազմակերպելու Հայաստանի, Ադրբեջանի եւ Իրանի արտաքին գործերի նախարարների եռակողմ հանդիպում՝ ղարաբաղյան հակամարտության խնդրի կապակցությամբ: Արդյոք կարելի՞ է ասել, որ Իրանը ցանկանում է Ղարաբաղի հարցում Մինսկի խմբին զուգահեռ սկսել միջնորդական գործընթաց:**



- Տարածաշրջանում խաղաղության ու անվտանգության կայացմանն ու միջազգային իրավունքի կանոնների եւ օրենքների շրջանակներում տարածաշրջանային ու միջազգային հակամարտությունների խաղաղ լուծմանը նպաստելը Իրանի Իսլամական Հանրապետության սկզբունքային քաղաքականությունն է:

Իրանի Իսլամական Հանրապետությունը մշտապես պատրաստակամ է եղել իրագործելու այդ քաղաքականությունը եւ այնտեղ որտեղ կարիք լինի, կներդնի իր ջանքերը, որպեսզի տարաձայնությունները լուծվեն լավագույն կերպով, այսինքն ապահովելով հակամարտող երկրների շահերը եւ հաստատելով տարածաշրջանային կայունություն: Ղարաբաղյան հակամարտությունը, որը գտնվում է մեր հարեւանությամբ եւս այս շրջանակներից դուրս չէ: Այդ ուղղությամբ Իրանի ջանքերն ու նախաձեռնությունները կարող են լրացնել մյուս գործողությունները: Բացի դրանից, մենք կարծում ենք, որ տարածաշրջանի խնդիրները պետք է լուծվեն տարածաշրջանի երկրների միջոցով:

**- Նկատի ունենալով Իրանի ակտիվությունը տարածաշրջանային գործընթացներում, խնդրվում է ներկայացնել պաշտոնական Թեհրանի դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ:**

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ Իրանի Իսլամական Հանրապետության պաշտոնական դիրքորոշումն է՝ հակամարտող կողմերին խրախուսել՝ ցուցաբերել զսպվածություն եւ խաղաղ ճանապարհով լուծել հակամարտությունը, եւ Իրանը պատրաստակամություն է հայտնում նպաստելու այդ գործընթացին:

**- Իրանական կողմը բազմիցս շեշտել է, որ ողջունում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը: Ինչպիսի՞ն էր պաշտոնական Թեհրանի արձագանքը՝ գործընթացի ներկա փուլի սառեցման ուղղությամբ պաշտոնական Երեւանի որոշմանը:**

- Իրանի Իսլամական Հանրապետությունը Թուրքիայի եւ Հայաստանի հետ ունի բարիդրացիական հարաբերություններ եւ ցանկանում է, որ բոլոր հարեւան երկրների սահմանները լինեն խաղաղ եւ կայուն, եւ այդ շրջանակներում ոչ միայն ողջունում է երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների ձեւավորումն ու սահմանների վերաբացումը, այլեւ հայտնել է իր պատրաստակամությունը՝ օժանդակելու այդ գործընթացին: Մեր համոզմամբ, երկրների փոխհարաբերություններում հիմնախնդիրների եւ պատմական հարցերի լուծումը պետք է իրականանա անհրաժեշտ ֆոնի եւ պայմանների ստեղծման լույսի ներքո:

**- Իրանում ինչպե՞ս են գնահատում իրանական միջուկային ծրագրի հարցում Թուրքիայի միջնորդական ջանքերը Արեւմուտքի եւ Իրանի միջեւ:**

Վառելիքի փոխանակման մասին 2010թ. մայիսի 17-ին Իրանի, Բրազիլիայի եւ Թուրքիայի արտաքին գործերի նախարարների կողմից ստորագրված Թեհրանի հայտարարությունը շրջադարձային կետ է, որը հեշտացնում է կառուցողական եւ համագործակցության մթնոլորտի ստեղծվելը: Իրանի Իսլամական Հանրապետությունը, Թեհրանի հայտարարությանը իր հավատարմությունը շեշտելու ուղղությամբ, 2010թ. մայիսի 24-ին մի նամակ ուղարկեց Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր քարտուղարին:

Այժմ հակառակ կողմերի հերթն է, որ ցույց տան իրենց բարի կամքը: Վիեննայի խմբի կողմից դրական պատասխան ստանալու դեպքում, պատրաստ ենք Թեհրանի հայտարարության հիման վրա սկսել բանակցությունները՝ վառելիքի փոխանակման համաձայնագրի վերաբերյալ:

Հուսով ենք, որ հակառակ կողմերը ըմբռնելով այս պատմական հնարավորությունը, կխուսափեն այնպիսի քայլերից, որոնք կարող են հանգեցնել այս հնարավորության կորստին:

Անկասկած Իրանի Իսլամական Հանրապետության հարցում ճնշում գործադրելու քաղաքականությունն ու մաքսիմալիզմը արդյունավետ չէ եւ այդ քաղաքականության անարդյունավետությունը բազմիցս ապացուցվել է:

Ցավոք սրտի, միջուկային ծրագրի հարցում Իրանի Իսլամական Հանրապետության կառուցողական դիրքորոշումը բախվեց որոշ արեւմտյան երկրների համառ եւ անտրամաբանական քայլերին, որոնք կարող են խաթարել Թեհրանի հայտարարությունից բխած դրական մթնոլորտն ու համագործակցության ձգտումը:

Թուրքիան եւ Բրազիլիան իրենց ակտիվ դիվանագիտությամբ կարեւոր դեր խաղացին Իրանի միջուկային հարցում համապատասխան կողմերի միջեւ փոխըմբռնման համար երկխոսության պատուհանը բաց պահելու ուղղությամբ: Այս առումով այն համոզմունքին ենք, որ համաշխարհային հանրությունը պետք է գնահատի նրանց ջանքերը: Իհարկե, ամերիկացի պաշտոնյաների եւ ԱՄՆ որոշ դաշնակիցների հայտարարությունները խոսում են այդ ջանքերը վնասելու՝ նրանց մտադրության մասին: Նրանք նաեւ մտահոգված են նոր ուժային բլոկների՝ միջազգային ասպարեզ մուտք գործելու կապակցությամբ:

Նկատի ունենալով՝ մի կողմից 1929 բանաձեւի ընդունումը, իսկ մյուս կողմից Իրանի հետ բանակցությունները շարունակելու առաջարկությունը, Իրանի Իսլամական Հանրապետությունը համարում է, որ արեւմտյան երկրների կողմից երկակի ստանդարտների կիրառումը ճիշտ չէ, եւ Իրանի ժողովուրդը կարծում է, որ նման երկակի ստանդարտներն ու քաղաքականությունը չեն կարող ազդեցություն ունենալ: Խտրական գործողություններից խուսափելը եւ միջազգային ասպարեզում անարդարության վերացումը ժողովուրդների իրավունքները հարգելու լավագույն ճանապարհն են: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում հակաիրանական չորրորդ բանաձեւի ընդունումը, որն ընդունվեց առանց կոնսենսուսի, սխալ եւ անօրինական քայլ է, եւ դրա նպատակն է արգելել Իրանի ժողովրդին՝ մատչելի դառնալու համաշխարհային առաջընթացին ու նորագույն տեխնոլոգիաները, այդ թվում՝ խաղաղ նպատակներով միջուկային տեխնոլոգիան, որը ոչ միայն կառուցողական եւ արդյունավետ չի լինելու առկա խնդիրների լուծման համար, այլեւ աշխարհի ժողովուրդների հասարակական կարծիքի հիշողության մեջ պատկերում է միջուկային խտրականությունը:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

## Բլերն իր գրքում պատմում է խմիչքի, Բրաունի եւ Իրաքի մասին

**Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերը նոր լույս տեսած հուշագրքում խոստովանում է թունդ խմիչքների հանդեպ իր հակումը եւ հակասական գնահատականներ է տալիս Իրաք զորք ուղարկելու սեփական որոշմանը: Նաեւ պնդում է, թե ներկայիս վարչապետ Գորդոն Բրաունը ունի «զրոյական հուզական ինտելեկտ»:**

**Բլերի խոսքերով, խմիչքը իրեն օգնում էր վերացնել վարչապետի աշխատանքի հետ կապված սթրեսը: Միաժամանակ նա հավաստիացնում է, թե ինքը միշտ իմացել է չափը: Նա այնուամենայնիվ եզրակացնում է, որ ալկոհոլը «թմրանյութ է, որից փրկություն չկա»:**

**Գիրքը ընդգրկում է 1997 թվականից մինչեւ մեր օրերը: Այն ժամանակ Բլերը ապրում էր Դաունինգ-սթրիթ փողոցի թիվ 10 տանը, իսկ Գորդոն Բրաունը ֆինանսների նախարարն էր: Բլերը նրան անվանում է «տարօրինակ երիտասարդ», որը չունի բավարար քաղաքական բնազդ եւ ուրիշ մարդկանց հույզերի ըմբռնողություն:**

**Վարչապետի պաշտոնում 2007-ին իրեն փոխարինած Բրաունի մասին Բլերը գրում է. «Նա ուներ քաղաքական հաշվենկատություն եւ վերլուծական ինտելեկտ, բայց հուզական ինտելեկտը զրո էր»: Միեւնույն ժամանակ Բլերը խոստովանում է. «Գորդոնը ուժեղ էր, ընդունակ եւ պայծառ. այդ հատկանիշների համար ես միշտ հարգել եմ նրան»:**

**Գրքում Բլերը նաեւ խոստովանում է, որ Սադդամ Հուսեյնի տապալումից հետո ինքը չէր սպասում, թե Իրաքում նման «մղձավանջային» իրավիճակ կծագի: Այս կապակցությամբ նա ափսոսանք է արտահայտում եւ ներողություն խնդրում Իրաքում սպանված բրիտանացի զինվորների հարազատներից:**

**Այդուհանդերձ Բլերը պնդում է, որ Իրաքի պատերազմին մասնակցելու իր որոշումը ճիշտ է եղել: Նրա խոսքերով, ոչինչ չձեռնարկելու դեպքում Մեծ Բրիտանիան իբր ենթակա կդառնար ավելի մեծ վտանգի, քան այդ պատերազմն է:**

## 13 պաղեստինյան խմբավորում ընդդեմ Իսրայելի

**Պաղեստինյան 13 խմբավորումներ միավորվել են Իսրայելի դեմ նոր հարձակումների նախապատրաստման նպատակով: Այդ մասին հայտարարել է Գազան վերահսկող «Համաս» արմատական շարժման ներկայացուցիչը, որը հակաիսրայելական սպառնալիքներով հանդես է եկել սեպտեմբերի 2-ին սկսված պաղեստինա-իսրայելական հաշտության բանակցությունների կապակցությամբ, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**«Համասի» ներկայացուցիչը խոստացել է պաղեստինյան մյուս խմբավորումների հետ նախապատրաստել «առավել արդյունավետ գրոհներ»: Պատասխանելով այն հարցին, թե արդյոք խոսքը մահապարտների ահաբեկչությունների՞ մասին է, նա նշել է, որ «հնարավոր են բոլոր տարբերակները»:**

**«Ջերուսալեմ փոստ» թերթը գրում է, որ «Համասը» դատապարտում է Աբբաս-Նաթանյահու բանակցությունները, դրանց նպատակը համարում է պաղեստինցիների անկախության պայքարի դադարեցումը եւ հրաժարվում է ճանաչել բանակցությունների արդյունքները: «Համասի» ներկայացուցիչը Պաղեստինյան ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբբասին մեղադրում է պաղեստինցի գաղթականների վերադարձի իրավունքը մերժելու մեջ, ինչպես նաեւ այն բանում, որ իսրայելցիներին թույլ է տալիս Այսրհորդանանում շարունակել հրեական նոր ավանների շինարարությունը:**

Մշակույթ

# Լոնդոնի թագավորական ֆիլհարմոնիկ նվագախումբը հանդես կգա Հայաստանում

«21-ի հեռանկարներ» 11-րդ միջազգային երաժշտական փառատոնն ամենամյա համերգաշրջանը կսկսի նոր՝ «Երեւանյան հեռանկարներ» անունով եւ սեպտեմբերի 22-ին ու 23-ին Լոնդոնի թագավորական ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգներով: Անվանափոխությունը պայմանավորված է Եվրոպական փառատոների միության անդամակցությամբ, ինչը ենթադրում է, որ փառատոնն այս կամ այն քաղաքի անունով կոչվի, իսկ երկրորդը՝ նախորդած համերգներով նախանշված մակարդակը այլեւս երբեք, անգամ փոքր ինչ չիջեցնելու սկզբունքով:

Աշխարհահռչակ նվագախմբի համերգներում հանդես կգան հռչակավոր օպերային մեներգիչներ **Հասմիկ Պապյանն** ու **Բարսեղ Թումանյանը**, ինչպես նաեւ դաշնակահար **Բորիս Բերեզովսկին**:




Անդրադառնելով արդեն «Երեւանյան հեռանկարներ» 11-րդ երաժշտական միջազգային փառատոնին, Բարսեղ Թումանյանը նշեց. «Փառատոնը դարձավ փոքր երկրի մեծ ցանկությունների իրականացման դաշտ: Իսկ այդ ցանկությունների իրականացումն էլ նպաստում է ազգի առողջացմանը, քանի որ ներկայացվում է բարձրակարգ, դասական արվեստ»:

«Ազգային պատկանելությունս որոշիչ չէ այս փառատոնին մասնակցելուս հարցում: Պարզապես գիտեմ, որ նշյալ համերգը պրոֆեսիոնալ առումով ոչնչով չի զիջի լավագույն, հեղինակավոր դահլիճներում տեղի ունեցողներին», տեղեկացրեց Հասմիկ Պապյանը:

Իսկ փաստը, որ Լոնդոնի թագավորական ֆիլհարմոնիկ նվագախումբը հանդես է գալու Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ, ապացուցում է հայաստանյան արվեստագետների համաշխարհային մակարդակը:

Ն. Պ.

# «Ինչ որ չենք արել անցյալի դժբախտ ճակատագրի բերումով, իրագործենք այսօր»

**Մշակույթի, գեղարվեստական գրականության նահանջն արդի շրջանում արդյոք պայմանավորված է դրանց նկատմամբ հանրային որոշակի անտարբերությամբ: Իսկ գուցե՝ այս ոլորտի հանդեպ պետական անփութությա՞մբ, եթե հարաբերելու լինենք պետբյուջեի հատկացումների չափաբաժինները, թերեւս, ամենասակավ միջոցներն ուղղված են գիտությանն ու մշակույթին, գրահրատարակչական գործին: Եվ սակավ են նաեւ բարեգործական-բարեսիրական այն հիմնադրամներն ու կազմակերպությունները, որոնք իրենց միջոցներն ուղղում են այս ոլորտին եւ հատկապես հայագիտությանը:**

**Այս առումով հայաստանյան գրական-հայագիտական միջավայրը իրապես երախտապարտ պետք է լինի եւ՝ է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկությանը եւ Հայկական համայնքների բաժանմունքի տնօրեն, դոկտոր Զավեն Եկավյանին. մտավորական նկարագրով բացառիկ մշակութասեր, գրասեր հայ մարդ, որ իր գործի ու ժամանակի առաջ պարտքի ու պատասխանատվության հստակ գիտակցությամբ է ապրում եւ ամենաէականը՝ սփյուռքյան հեռավորությամբ ոչ թե խոսքի երանելի մակարդակներում, այլ՝ գործնական արդյունավետությամբ, ռեալ օգտակարությամբ հայրենի մշակույթին, գիր ու գրականությանը:**

**«Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկությունը հայաստանյան հետանկախության՝ մեր պետականության փուխր այս շրջանում անգնահատելի ծառայություն մատուցեց եւ շարունակում է բարեսիրական այդ գործունեությունն ի նպաստ առողջապահության, գիտության, կրթության եւ մշակույթի զարգացման:**

**Զավեն Եկավյանի հայաստանյան ամառային այս այցելությունն, ինչպես իր խոսքում նշեց Պերճ Ստեփանյանը, առանձնացավ առավել գործնական բնույթով, եւ հանդիպումների շառավիղն էլ լայն էր, ինչը հայրենի մտավորական տարբեր միջավայրերում «Գյուլբենկյան» հիմնարկության հեղինակության վկայությունն է, ինչպես ասում են՝ արած գործի հունձքը: Երեկվա հանդիպումը Մ. Աբեղյանի գրականության ինստիտուտում բացվեց տնօրեն, բան. գիտ. դոկտոր Ավիկ Իսահակյանի կողմից Զավեն Եկավյանին ինստիտուտի բարձրագույն՝ Մ. Աբեղյանի անվ. արծաթյա հուշամեդալի հանձնումով: Պայմանավորվածություն ձեռք բերվեց Ավետիք Իսահակյանի ակադեմիական երկերի 14 հատորյակի (2-ն արդեն լույս է տեսել)՝ «Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ տպագրելու մասին:**

**Բոլոր ելույթներն, անշուշտ, շնորհակալական բնույթի էին: Գրականության ինստիտուտի փոխտնօրեն Վարդան Դեւրիկյանը «Մատենագիրք Հայոց»-ի տպագրությամբ ընդհանրացրեց հայերենագիտության զարգացմանն ուղղված հիմնարկության ջանքերը: Ըստ նրա, հատորի ամբողջական հրատարակությունը ամենամեծ գրական հուշարձանը կդառնա հայոց գրերի գյուտի 1600 եւ հայ տպագրության 500-ամյակներին: Իր գնահատմամբ, գործն արվել է ամենապատասխանատու կերպով՝ թե՛ մասնագիտորեն, թե՛ շռայլ մոտեցմամբ. «Եթե անկեղծ լինենք, մեծ աջակցություն է նաեւ հեղինակներին: Անձամբ, կարող եմ ասել, որ այն ինչ ստացա իմ աշխատանքի դիմաց, բոլոր ակնկալիքները գերազանցեցին, դրա շնորհիվ կարողացա եւս 2-3 գիրք հրատարակել»:**

**ԵՊՀ հրատարակչության տնօրեն Պերճ Ստեփանյանը «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հետ համագործակցության տարիների փորձ ունի: Պ. Ստեփանյանը կարեւորեց Զավեն Եկավյանի այս այցելությունը առավել գործնական, առարկայական առումով, ինչն արտահայտվեց Մատենադարանի, պետհամալսարանի, իսկ երեկ արդեն մշակույթի նախարարության հետ համաձայնագրերի ստորագրմամբ, վերջինը՝ պատմական հուշարձանների վերանորոգմանն առնչվող: ԵՊՀ հրատարակչությունը «Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ տպագրել է արդեն 110 գիրք, մինչեւ տարեվերջ այդ թիվը կհասնի 120-ի, որոնց մեջ նաեւ մեծածավալ՝ 1000-1200 էջանոց գրքեր, գիտական գրականություն, աշխատատար՝ մասնագիտորեն եւ ծախսատար նաեւ: Գրքերի տպագրության մի զգալի մասի մտահղացումը Զավեն Եկավյանինն է: Իր առաջարկությամբ վերահրատարակվելու է 1944-ին տպագրված Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը», Թորոս Թորոմանյանի «Ճարտարապետության պատմություն» երկհատորյակը: «Ինչ վերաբերում է գրքի նկատմամբ Զավեն Եկավյանի սիրուն, դժվար է նկարագրել: «Մատենագիրք Հայոցը» պատմական արժեք է, որն ամփոփում է V դարից մինչեւ XVIII դարի հայ մատենագրությունը. սա խիզախ մի քայլ է, որ նախաձեռնեց Զավեն Եկավյանը եւ խոնարհման արժանի գործ է»:**

**Իսկ ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը համոզված է, որ հայ տպագրության 500-ամյակին «Գյուլբենկյան» հիմնարկության հատորները լավագույններից են լինելու:**

**Ինչպես եւ նախորդ հանդիպումներին, այս անգամ էլ Զավեն Եկավյանի խոսքին հետեւելը իսկապես ուսանելի էր: Երբ կրկին հիշեցվում է մարդկության դասական արժեքների ձեռքբերման եւ դրանց պահպանման մասին: Հիացմունքի է արժանի երախտագիտության այն խորը զգացումը, որ Զավեն Եկավյանն ունի իր ուսումնառության վայրի՝ Երեւանի պետհամալսարանի եւ ուսուցիչների հանդեպ, երբ ուսանում էր մեծավաստակ գիտնականներ Հրաչյա Աճառյանի, Մանուկ Աբեղյանի, Գրիգոր Ղափանցյանի հետեւորդների մոտ:**

**«Այստեղ ուսանած մի աշակերտ եմ եղել եւ եթե այսօր Լիսաբոնում եմ, կարծում եմ, պարտական եմ այն ուսմանս, որ ստացած եմ Երեւանի պետհամալսարանում, պարտական եմ իմ սիրեցյալ եւ անմահ դասախոսներին, հետեւաբար վերադառնում եմ այն, ինչ որ ստացած եմ՝ ոչ ավել, ոչ պակաս: Այստեղ հերոսություն չկա, ոչ մեկս հերոս չենք, մենք միայն մեր մշակույթի, Մեսրոպ Մաշտոցի զինվորներն ենք»: Դիմելով ներկա գրականագետներին, գրողներին, նա ակնկալեց ավելի հարուստ, ավելի արդիական ստեղծագործություններ:**

**Հաջորդ նրա ցանկությունը մեր մշակույթը օտարներին ծանոթացնելն է. մի բան, որ այսօրվա մեր ամենաթերի կողմը նկատվեց: Առաջարկեց ստեղծել թարգմանչական դպրոց, տանել համակարգված եւ լուրջ աշխատանք. «Ինչ որ չենք արել անցյալի դժբախտ ճակատագրի բերումով, գոնե իրագործենք այսօր»:**

**Զավեն Եկավյանը շատ գեղեցիկ ու զգացական արտահայտվեց հայոց լեզվի մասին. «Դրսի հայության համար մեր լեզուն մեր հողն է: Երբեմն բարձրաձայն եմ կարդում, որ չմոռանամ: Անվերջ է այդ լեզվի հարստությունը, բայց պետք է մշակենք այդ լեզուն, պետք է հող տանենք, ջրենք»:**

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# Փոխըմբռնման հուշագիր ՀՀ մշակույթի նախարարության եւ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության միջեւ

**«Ազգը» տեղեկացրել էր, որ անցած շաբաթ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն դոկտոր Զավեն Եկավյանին հանձնվեց ՀՀ մշակույթի նախարարության բարձրագույն պարգեւը՝ «Ոսկե մեդալ», եւ հանդիպման ժամանակ խոսվել է առաջիկա համագործակցության ծրագրերի շուրջը: Երեկ նախարար Հասմիկ Պողոսյանն ու դոկտոր Զավեն Եկավյանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր՝ մշակույթի եւ արվեստի բնագավառում համագործակցության մասին:**

**Այնուհետեւ դոկտոր Եկավյանը հանդիպեց լրագրողների հետ ու մանրամասն ներկայացրեց այն չորս ոլորտները՝ ժառանգության պահպանման, ժամանակակից արվեստ, մշակութային, կրթության եւ գրահրատարակչության, որոնց շուրջը կլինեն հուշագրում տեղ գտած համագործակցության աշխատանքները:**

**Զավեն Եկավյանը անդրադառնալով հուշարձանների պահպանության խնդրին ասաց. «Մենք պետք է շարունակենք այն գործը, ինչը սկիզբ է դրվել Գալուստ Գյուլբենկյանի ստորագրած կտակի համաձայն՝ 1955-ին Էջմիածնի վանքի զանգակատան ու նաեւ վերանորոգման աշխատանքներով: Հետեւաբար պատմամշակութային ժառանգության պահպանումը, վերականգնման, ուսումնասիրությունը եւ հարակից աշխատանքները մեր համագործակցության մի մասն են կազմելու»:**

**Անդրադառնալով Ժնեւի, Օքսֆորդի, Լիոնի եւ այլ համալսարաններում ստեղծված Հայագիտական ամբիոններին, պրն Եկավյանը նշեց. «Սա մեր պարտականությունն է մայր հողում նպաստել գիտական հրատարակությունների շարունակությանը: Միաժամանակ պիտի քաջալերենք մշակույթի տարբեր ոլորտներում երիտասարդ կադրերի ուսումնառությունը արտերկրի առաջատար մշակութային ուսումնական հաստատություններում»:**

**Նշենք նաեւ, որ կողմերի միջեւ համաձայնություն է ձեռք բերվել համատեղ ծրագրեր իրականացնել 2012 թ. հայ տպագիր գրքի 500-ամյակին նվիրված միջոցառումների, ինչպես նաեւ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հռչակված «Երեւանը գրքի 2012 թ. համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Ինչո՞ւ չերգեն նաեւ թուրքերեն»

**«Ոչ, նետ, յոխ», այսպես պատասխանեց երգահան Ռուբեն Հախվերդյանը լրագրողների այն հարցին՝ արդյոք Ռուբեն Հախվերդյանը հեղինակային իրավունքի հետ կապված պայմանագի՞ր է կնքել թուրքերի հետ: Երեկ «Հայելի» ակումբում Ռ. Հախվերդյանը տեղեկացրեց, որ իր երգերը թուրքերեն կատարելու վերաբերյալ առաջարկ չի ստացել, բայց եթե ստանար, չէր մերժի: «Իմ երգերը երգում են**




**ֆրանսերեն, չեխերեն, ռուսերեն, սերբերեն, իսկ ինչո՞ւ չերգեն նաեւ թուրքերեն» , ասաց Ռ. Հախվերդյանը, ապա ընդգծեց. «Մշակույթի մեջ սահմաններ չկան: Ես մի զարգացած թուրքին չեմ փոխի հազար տգետ հայի հետ: Որեւէ ազգի կուրորեն ատել չի կարելի»: Ռ. Հախվերդյանի խոսքով՝ իր երգարվեստում կարեւոր նշանակություն ունեն բառերը, հետեւաբար շատ կարեւոր է դրանք չաղավաղելը. «Բացի այդ՝ «Վերնիսաժում» հիմա 300-400 դրամով վաճառվում են իմ CD-ները, որոնք ինձ հետ ոչ մի կապ չունեն: Հենց դրանով բարոյական մեծ վնաս են հասցնում»:**

**Հարցին, թե Ռուբեն Հախվերդյանի ու Դաշնակցության միջեւ սեւ կատո՞ւ է անցել, որովհետեւ երգահանը կողմ է արտահայտվել իր երգերը թուրքերեն թողարկելուն, բանախոսը պատասխանեց. «Իմ ու Դաշնակցության միջեւ ո՞նց կարող է սեւ կատու անցնել»: Նրա խոսքով՝ Դաշնակցությունը գաղափարախոսություն է, ու եթե խնդիրներ կան, ապա դրանք կապված են կուսակցության հետ, ոչ թե գաղափարախոսության:**

**Երգահան Արտավազդ Բայաթյանն էլ խոսեց հայ հասարակության երաժշտական ճաշակի մասին. «Մեր երաժշտությունը շաղախված է թուրքական ու արաբական երանգներով, ինչն էլ խրախուսվում, գնահատվում ու ֆինանսավորվում է»: Այսօր ճաշակ թելադրող են դարձել այն մարդիկ, որոնք 60-ականներին դեռ վրանների տակ էին հարսանիք անում: «Հիմա նրանցից շատերը դարձել են հեղինակություններ ու ճաշակ են ձեւավորում», ավելացրեց Ռ. Հախվերդյանը: Արաբաթուրքական երաժշտությունը տարածված է ոչ միայն ռեստորաններում, այլեւ փողոցում, գետնանցումներում եւ այլուր: Նման երաժշտությունը, ըստ Ռ. Հախվերդյանի, ամենեւին էլ «ռաբիս» երաժշտություն չէ. «Ռաբիսը» վերջացել է 40-ականներին», իսկ դրանից հետո սկսել է անճաշակությունը: Հայ ժողովուրդն իսկական արվեստ ու հանճարներ է ունեցել Արեւմտյան Հայաստանում, «Թուրքերը մեզ որպես մշակույթ վերացրին», հավելեց Ռ. Հախվերդյանը:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Մարտին Յավրյանին՝ 2-րդ մրցանակ

**Գերմանական «Բադիշե ցայթունգից» սեպտեմբերի 1-ին տեղեկանում ենք, որ Ֆրայբուրգում կայացած ջութակահարների միջազգային մրցույթում մեր հայրենակից, 27-ամյա Մարտին Յավրյանը Զյուղդենից 22-ամյա Ելենա Գրաֆի հետ արժանացել է երկրորդ մրցանակի: Առաջին մրցանակի եւ Մոցարտի ջութակի կոնցերտի լավագույն կատարման համար պարգեւի է արժանացել իսրայելցի 24-ամյա Իտամար Ցորման: Լավագույն պատանի մեկնաբան է ճանաչվել 14-ամյա Միլենա Վիլքեն: 28 մասնակիցների միջեւ ծավալված բարձրակարգ մրցույթում Յավրյանը կատարել է Պրոկոֆեւի ջութակի 2-րդ g-moll կոնցերտը՝ արժանանալով մասնագետ ունկնդիրների տպավորիչ գնահատականին:**

Ան. Հ.

Գերմանիա

## ՄԱՐԶԱԿԱՆ

# Լավատեսական հույսերը չարդարացան

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականն իռլանդացիներից 0-1 հաշվով կրած պարտությամբ սկսեց Եվրո-2012-ի ընտրական մրցաշարը: Ընտրական 2-րդ խմբի կազմը հայ ֆուտբոլասերներին լավատեսորեն էր տրամադրել, որոնց կարծիքով կարելի էր մեր հավաքականից լավ արդյունքներ ակնկալել: Ֆուտբոլասերները մարզադաշտ էին եկել մեր հավաքականի կատարմամբ գեղեցիկ ու գրագետ ֆուտբոլ տեսնելու ակնկալիքով եւ ինչու չէ, նաեւ հաղթանակին ականատես դառնալու: Սակայն ցավոք, լավատեսական այդ հույսերը չարդարացան: Ցավալին այն է, որ մեր ֆուտբոլիստները պարտվեցին մի թիմի, որի ցուցադրած խաղն առանձնապես տպավորություն չթողեց: Մինչդեռ Իռլանդիայի հավաքականին ընտրական 2-րդ խմբի հաղթողի հավակնորդներից մեկն են համարում:


ՖՈՏՈԼՈՒՐ

Առաջին խաղակեսն անցավ բավական աշխույժ մրցակցությունում, թեեւ գոլային պահերով այնքան էլ հարուստ չէր: Մեր ֆուտբոլիստները փորձում էին գրոհել մրցակցի դարպասը, սակայն նրանց մոտ կոմբինացիոն խաղը չէր ստացվում: Դրա պատճառով էլ մերոնք չկարողացան լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Կարելի է թերեւս հիշատակել Մովսիսյանի եւ Մալաքյանի հեռահար հարվածները, որոնք նպատակին չհասան:

Իռլանդացի ֆուտբոլիստները գործում էին տիպիկ բրիտանական ոճով՝ գրոհների ժամանակ գնդակը հիմնականում բարձրից հասցեագրելով տուգանային հրապարակ: Ճիշտ է, նման մարտավարությունը մի փոքր պարզունակ էր դարձնում հյուրերի խաղը, սակայն իռլանդացիների գրոհներն իրենց մեջ մեծ վտանգ էին պարունակում՝ ստիպելով մեր պաշտպաններին ծանրաբեռնված գործել, անընդհատ օդային պայքարի մեջ մտնել մրցակիցների հետ: Առաջին խաղակեսում նրանք մի քանի անգամ սպառնացին Ռոման Բերեզովսկու պաշտպանած դարպասին: Շատ ակտիվ էր հարձակման կրակագծում գործող Ռոբի Քինը: Խաղասկզբում նա կարող էր բացել հաշիվը, սակայն վրիպեց նպաստավոր դիրքից: Ճիշտ է, նրան այնուամենայնիվ հաջողվեց գրավել դարպասը, սակայն «խաղից դուրս» վիճակում էր:Իսկ ամենաիրական գոլային պահը մեր դարպասին ստեղծվեց 22-րդ րոպեին, երբ անկյունայինի խաղարկումից հետո մոտ տարածությունից Լեգդերի գլխի հարվածից հետո Բերեզովսկին փրկեց դրությունը:

Ընդմիջումից հետո հայ ֆուտբոլիստները թեեւ որոշ չափով ակտիվացրին հարձակողական գործողությունները, սակայն գրոհների եզրափակիչ փուլում հաջող չէին խաղում, ուստի այդպես էլ չկարողացան գրավել հյուրերի դարպասը: Հիշարժան էր Մխիթարյանի վտանգավոր հարվածը, որը որսաց դարպասապահը: Անկյունայինի խաղարկումից հետո էլ Կառլեն Մկրտչյանը փորձեց գրավել դարպասը, սակայն արդյունքի չհասավ: Քիչ անց Փաչաջյանի փոխանցումից հետո հյուրերի պաշտպանը քիչ էր մնացել գլխով գնդակը ճեղեր սեփական դարպասը:

Իռլանդացիները թեեւ ավելի քիչ էին տիրում գնդակին, սակայն նրանց գրոհներն ավելի սուր ու վտանգավոր էին: 63-րդ րոպեին ստեղծվեց հանդիպման գոլային ամենաիրական պահը: Առաքելյանը սխալվեց օդային պայքարում ու գնդակը հայտնվեց Ռոբի Քինի մոտ: Բարեբախտաբար, մոտ տարածությունից նրա հարվածը դիպավ ձողին: Իսկ ահա 77-րդ րոպեին օգտվելով մեր պաշտպանների անհամաձայնեցված խաղից, փոխարինման մտած Քեյթ Ֆահին գրավեց դարպասը: Այդ գոլն էլ հաղթանակ պարգեւեց իռլանդացիներին: Հերթական անգամ Հայաստանի հավաքականն ընտրական մրցաշարը սկսեց պարտությամբ:

# Եվրոպան ընդդեմ վուվուզելաների

ՈւԵՖԱ-ն պաշտոնապես արգելել է վուվուզելաների օգտագործումն իր հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումներում: Այդ մասին տեղեկացված են ՈւԵՖԱ-ի անդամ 53 երկրների ֆուտբոլի ֆեդերացիաները:

«Ֆուտբոլի հմայքը խաղադաշտում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ տրիբունաների զգացմունքների արտահայտումն է: ՈւԵՖԱ-ն գտնում է, որ վուվուզելաների օգտագործումը կփոխի ֆուտբոլային մթնոլորտը, կկլանի հանդիսականների զգացմունքները եւ կազդի նրանց կողմից ֆուտբոլի ընկալման վրա: Դրանից խուսափելու, ֆուտբոլասերների երգերն ու բացականչությունները լսելի դարձնելու համար, ՈւԵՖԱ-ն անհապաղ արգելք է դնում իր հովանու ներքո անցկացվող մրցումներում վուվուզելաների օգտագործման վրա», նշված է ՈւԵՖԱ-ի հայտարարությունում:

Վուվուզելաները հանրությանը հայտնի դարձան ՀԱՀ-ում անցկացված ֆուտբոլի աշխարհի առաջնության ժամանակ: Սակայն հարավաֆրիկյան այդ գործիքները ոչ բոլորն ընդունեցին ուրախությամբ: Դրանցից իրենց դժգոհությունն էին հայտնում նաեւ աշխարհի առաջնության մասնակիցները, նշելով, որ ձայնը խանգարում է խաղի ժամանակ կենտրոնանալ: Նշենք, որ բացի ՈւԵՖԱ-ից, վուվուզելաներն արգելել են նաեւ բասկետբոլի միջազգային ֆեդերացիան ու հոկեյի մայրցամաքային լիգան:

# Պարտություն մեկնարկում

Հանդբոլի Հայաստանի տղամարդկանց հավաքականը պարտությամբ սկսեց Վանաձորում մեկնարկած միջազգային մրցաշարը, որում խաղարկվում է ՀՀ վարչապետի գավաթը: Մեր հանդբոլիստները 20-37 հաշվով զիջեցին Բելառուսի հավաքականին: Առաջին խաղակեսում մեր հավաքականը 7 գնդակի տարբերությամբ էր (13-20) զիջում բելառուսներին:


ՖՈՏՈԼՈՒՐ

Ընդմիջումից հետո զգալ տվեց հոգնածությունը եւ հյուրերին հաջողվեց մեծացնել հաշվի տարբերությունը: Հայաստանի հավաքականի կազմում ամենաարդյունավետը Մարկ Հասիկյանն էր, որը խփեց 6 գոլ: Մյուս խաղում Իրանի հավաքականը 33-28 հաշվով հաղթեց վրացիներին: Իրանի հավաքականի կազմում 15 գոլի հեղինակ դարձավ Մասուդ Ջոհրաբին՝ գլխավորելով մրցաշարի լավագույն ռմբարկուների ցուցակը:

## ՇԱԽՄԱՏ

# Արոնյանի հաղթական մեկնարկը

**Լեւոն Արոնյանը հաղթանակով մեկնարկեց Չինաստանի Շանհայ քաղաքում անցկացվող մրցաշարում: Մեկնարկային տուրում հայ շախմատիստը սեւերով 35-րդ քայլում պարտության մատնեց չինացի Վան Հաոյին: Այսօր կայանալիք 2-րդ տուրում Արոնյանը սպիտակներով կմրցի Իսպանիայում բնակվող Ալեքսեյ Շիրովի հետ: Վերջինս մեկնարկային տուրում սեւերով հաշտություն կնքեց Վլադիմիր Կրամնիկի հետ:**



**Մրցակարգի համաձայն, հաղթանակի համար տրվում է 3 միավոր, ոչ-ոքին գնահատվում է մեկ միավոր: Հիշեցնենք, որ երկու շրջանով անցկացվող մրցաշարում լավագույն արդյունքի հասած 2 շախմատիստները հոկտեմբերին Բիլբաոյում Մագնուս Կառլսենի եւ Վիշվանաթան Անանդի հետ կվիճարկեն «Մեծ սաղավարտ» մրցանակը:**

# Մրցաշարում երկիշխանություն է

**Ֆիլիպիններում ավարտին է մոտենում շախմատի Կամպոմանեսի հուշամրցաշարը: Ըստ մրցումների պաշտոնական կայքի, նախավերջին՝ 8-րդ տուրում Տիգրան Քոթանջյանը սեւերով պարտության մատնեց ֆիլիպինցի Մերբեն Ռոքուեին: Քոթանջյանը 4,5 միավորով 27-րդ տեղում է: Ավարտական տուրում Քոթանջյանը սպիտակներով կմրցի հնդիկ միջազգային վարպետ Ռոյ Սապտարշիի հետ:**

**8 տուրից հետո մրցաշարում երկիշխանություն է: 6,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են չինացի շախմատիստներ Չժաո Ցզյունը եւ Չժոու Ցզյանչաոն: Առաջինը ոչ-ոքի խաղաց վիետնամցի Լե Կուանգ Լեմի հետ, իսկ 2-րդը հաղթեց ֆիլիպինցի Դարվին Լայլոյին: Վերջին տուրում Ցզյանչաոն սպիտակներով կխաղա Լե Կուանգ Լեմի, իսկ Ցզյունը սեւերով կմրցի Ուզբեկստանի ներկայացուցիչ Անտոն Ֆիլիպովի հետ:**

# Երիտասարդները նախապատրաստվում են վերջին հանդիպմանը

**Սեպտեմբերի 2-ից ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականի ֆուտբոլիստներն ուսումնամարզական հավաք են անցկացնում՝ նախապատրաստվելով սեպտեմբերի 7-ին Վրաստանի հավաքականի հետ կայանալիք ընտրական վերջին մրցախաղին: Այդ հանդիպումը նաեւ Ֆլեմինգ Սերիցլեւի համար վերջինը կլինի ՀՀ երիտասարդական հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում: Նա մարզչական աշխատանքը կշարունակի Իրանում:**

**Ինչպես հայտնի է, երիտասարդական հավաքականի առանցքային ֆուտբոլիստները հրավիրվել են ազգային հավաքական, ուստի Սերիցլեւը վրացիների հետ խաղում կազմի ընտրության քիչ հնարավորություններ ունի:**

**Ընտրական վերջին հանդիպմանը նախապատրաստվում են 18 ֆուտբոլիստներ: Այս անգամ հավաքի չի հրավիրվել երիտասարդականի հիմնական դարպասապահ Էդուարդ Հովհաննիսյանը, որն անվստահ խաղաց վրացիների հետ երեւանյան խաղում: Նրա փոխարեն հրավիրվել են «Փյունիկ-2»-ի դարպասապահ Կարեն Իսրայելյանը եւ Գեւորգ Պրազյանը, որը վերջերս է «Արարատից» տեղափոխվել «Իմպուլս»: Սակայն Պրազյանն էլ խաղային պրակտիկայից զրկված է եղել, քանի որ խնդիրներ ուներ «Արարատի» հետ ու չէր խաղում:**

**Պաշտպաններից խաղին նախապատրաստվում են Արտաշես Առաքելյանը, Արմեն Ջաքարյանը, Գագիկ Դաղբաշյանը, Կամո Հովհաննիսյանը, Գրիշա Խաչատրյանը, Վարազդատ Հարոյանը, Լեւոն Հայրապետյանը:**

**Կիսապաշտպանական գծի խաղացողներից մարզումներին մասնակցում են Արթուր Յուզբաշյանը, Վալտեր Պողոսյանը, Հրաչ Յագանը, Մասիս Ոսկանյանը, Արտակ Դաշյանը, Արտակ Ալեքսանյանը եւ Սարգիս Կարապետյանը: Հարձակվողների թվում են ընդամենը երկու ֆուտբոլիստներ՝ Զավեն Բադոյանն ու Գեւորգ Բաղալյանը:**

# 16 ուժեղագույնները շարունակում են պայքարը

Թուրքիայում ավարտվեց բասկետբոլի տղամարդկանց աշխարհի առաջնության նախնական փուլը ու հայտնի դարձան 1/8 եզրափակիչի բոլոր մասնակիցները: Նախնական փուլի հանդիպումներում գրանցվեցին նաեւ անակնկալ արդյունքներ: Դրանցից մեկը մատուցեց Նոր Զելանդիայի հավաքականը, որը ֆրանսիացիներին հաղթեց 82-70 հաշվով եւ D խմբում գրավեց 3-րդ տեղը: Իսկ դա նշանակում է, որ 1/8 եզրափակիչում նորզելանդացիները կհանդիպեն ռուսների հետ: Վերջիններս պարտության մատնեցին հույներին (73-69) եւ C խմբում գրավեցին 2-րդ տեղը:

Հունաստանի հավաքականը 1/8 եզրափակիչում կմրցի Իսպանիայի ընտրանու հետ: Իսպանացիները 89-67 հաշվով առավելության հասան կանադացիների նկատմամբ: A խմբում կայացավ առաջատարների՝ Արգենտինայի եւ Սերբիայի բասկետբոլիստների մրցավեճը, որում պետք է որոշվեր խմբի հաղթողը: Հաջողությունն ուղեկցեց սերբերին, որոնք հաղթեցին 84-82 հաշվով ու գրավեցին առաջին տեղը: Արգենտինացիներն անդրանիկ պարտությունը կրեցին: 1/8 եզրափակիչում սերբերը կմրցեն խորվաթների հետ, իսկ արգենտինացիների մրցակիցը կլինի Բրազիլիայի հավաքականը:

Երեք թիմեր՝ ԱՄՆ-ի, Թուրքիայի եւ Լիտվայի ընտրանիները նախնական փուլում հաղթեցին իրենց բոլոր մրցակիցներին: Ավարտական տուրում ամերիկացիները հաղթեցին Թունիսի հավաքականին (92-57), թուրքերն առավելության հասան չինացիների նկատմամբ (87-40), իսկ Լիտվայի հավաքականը հաղթեց Լիբանանի բասկետբոլիստներին (84-66): 1/8 եզրափակիչում զույգեր են կազմել ԱՄՆ-ն ու Անգոլան, Լիտվան ու Չինաստանը, Թուրքիան ու Ֆրանսիան, Սլովենիան ու Ավստրալիան:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

# Օրվա հետքերով

«Նարեկացի արվեստի միության» սրահում սեպտեմբերի 2-ից ցուցադրվում են Թեհրանի «Ակունք» կենտրոնի աշակերտների նկարչական աշխատանքները՝ մաքուր, անաղարտ գունային աշխարհ, որտեղ հեղինակների ինքնարտահայտությունը բնությանը ներդաշնակ լուռ երկխոսություն է՝ գեղեցիկ բնապատկերներ՝ տարվա եղանակների ու ծաղիկների:

## Աստվածահաճո եւ շնորհակալ գործ

1998 թվականն էր, երբ թեհրանահայ **Մարթա Հովսեփյանին** կյանքի հանգամանքները մղեցին ձեռնարկելու մարդասիրական մի ծրագիր, որի շարունակությունն իսկապես օգտակար եղավ եւ իրեն եւ շատ ուրիշների: Նա իր շուրջը համախմբեց այն ընտանիքներին, որտեղ մարմնա-մտային խանգարումներով երեխաներ կան: Մարթան՝ բարեհամբույր ու պարզ մի անձնավորություն, կարողանում է համոզել ծնողներին, որ երեխաներին մանկատուն ուղարկելու փոխարեն, կարելի է ստեղծել մի կառույց եւ զբաղվել նրանց կրթությամբ, եւ որովհետեւ դժվարությունները մարդու համար են եւ հաղթահարողն էլ մարդն է: Իսկ այդ երեխաները մյուսների պես կարիք ունեն ինքնարտահայտվելու եւ հասարակության իրավահավասար անդամներ են:

Թեհրանահայ ազգային եւ հոգեւոր իշխանությունների աչքից չվրիպեց Մարթայի ձեռնարկած աստվածահաճո գործը: Նրանց տեղ հատկացվեց Թեհրանի Սբ Աստվածածին եկեղեցու բակում: «Ակունք» այստեղ հաճախում են 5-ից 46 տարեկան շուրջ 34 իրանահայեր: Այստեղ կան ֆիզիոթերապիայի, մտային զարգացման ուսուցիչներ, լոգոպեդներ, փորձում են նաեւ զարգացնել նրանց գեղարվեստական ունակությունները, ինտեգրել հանրությանը՝ որպես լիարժեք անդամներ: Մասնակցությունը երաժշտական, պարային, թատերական, նկարչության, խեցեգործության դասընթացներին՝ հղկում է նրանց գեղագիտական զգացողությունները: Կենտրոնը հաճախակի է կազմակերպում մշակութային ձեռնարկներ, ցուցահանդես-վաճառքներ:

«Ակունքի» 7 աշակերտ եւ 4 ուսուցիչ այս օրերին Երեւանում են , նրանց սիրով հյուրընկալել է «Նարեկացի» արվեստի միությունը, որտեղ բացված նկարչական ցուցահանդեսը կտեւի մինչեւ սեպտեմբերի 8-ը, իսկ Շուշիում՝ ամսի 11-14-ը:

Մարթա Հովսեփյանը շնորհակալ ու աստվածահաճո գործ է կատարում: Տեսնել էր պետք այս երեխաների ուրախությունը հանդիսատեսի ջերմությունից եւ ուշադրությունից, սրահի պատերին իրենց նկարների ներկայությունից, հյուրասիրությունից: Տեսնել էր պետք ու խորհել նաեւ, մանավանդ թեհրանահայ համայնքի պատգամավոր **Գեւորգ Վարդանյանի** խոսքից հետո: «Շնորհակալ եմ այս մարդկանց, ովքեր այլ հայացքով են աշխարհին նայում: Իմ կարծիքով, մի փոքր դաժան է հնչում այդ բառը (նկատի ունի՝ մարմնա-մտային խանգարումները): Կնախընտրեի այդ խանգարումները, չակերտների մեջ տեսնել: Որովհետեւ «խանգարված-չխանգարված», «առողջ-վատառողջ», «լավ-վատ», «բարի-չար» եւ բոլոր այդպիսի բառերը, որոնց մարդիկ իշխանություն են տալիս, հարաբերական են: Այսօր շատ խանգարված ղեկավարներ զլանում են իրենց նախնական պարտականությունը կատարել իրենց համայնքների հանդեպ: Շատ առողջ համարվածներ գործում են ոճիրներ, որ ամենաչափերսյալ խանգարվածի մտքով անգամ չի անցնի: Շատ պատասխանատու եւ գնահատելի աշխատանք են տանում ուսուցիչները, մարզիչները, ովքեր փորձում են հասկանալ նրանց եւ աշխարհին նայել նրանց աչքերով»:

«Ակունք» կենտրոնն աշխատում է Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Սեպուհ արք. Սարգսյանի հովանավորությամբ: Իր բյուջեն գոյանում է տեղի համայնքի նվիրատվություններից եւ ցուցահանդեսվաճառքներից:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

## Գումարվեց ՀՀ սփյուռքի նախարարին կից աստանի նիստ

**Երեկվա աստանի նիստի օրակարգում ընդգրկված էր երկու հարց՝ հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգի եւ հայրենադարձության օրենքի նախագծին առնչվող խնդիրները ու նաեւ կերպարվեստի գործիչների համաժողովի կազմակերպման աշխատանքների մասին զեկույցները:**

**Առաջին հարցը ներկայացրեց փոխնախարար Ստեփան Պետրոսյանը: Նա տեղեկացրեց, որ «Հայրենադարձության մասին օրենքի» նախագիծն ու հայեցակարգը ստեղծվել է երկարատեւ աշխատանքի ընթացքում, եւ աստանի անդամների կարծիքները ներառվել են փաստաթղթում: «Այս գործընթացը հանդիսանում է մեր նախարարության հիմնարար եւ կարեւորագույն խնդիրներից մեկը: Փաստաթուղթը ուղարկվել է բոլոր օտար երկրներում գործող հայկական դեսպանատներ, համահայկական կառույցներ ու նրանցից ստացած առաջարկությունները, դիտողությունները նույնպես հաշվի են առնվել նախագծում», ասաց պրն Պետրոսյանը: Այնուհետեւ զեկուցողը ներկայացրեց փաստաթղթում ընդգրկված դրույթները, որոնց վրա հիմնված են հայրենադարձության հայեցակարգն ու «Հայրենադարձության մասին օրենքի» նախագիծը: Պրն Պետրոսյանն անդրադառնալով այն հարցադրմանը, որ արտագաղթը շարունակվում է, իսկ նախարարությունը հայրենադարձության մասին է մտածում, բերեց թվային տվյալներ. «2006-09 թթ. ՀՀ մշտական բնակության է վերադարձել շուրջ 500 սփյուռքահայ, կացության հասուկ եւ մշտական կարգավիճակ է ստացել 3000-ը, իսկ հողակտոր կամ բնակարան են ձեռք բերել շուրջ 15.000 սփյուռքահայ, եւ վերջին 2 տարվա ընթացքում ՀՀ քաղաքացիություն է ընդունել 6000 սփյուռքահայ»: Զեկուցողը պարզաբանեց, որ հայեցակարգի հիմքում դրված չէ աշխարհասփյուռ հայության զանգվածային հայրենադարձության կազմակերպումը, այլ այն հայերի, որոնք ցանկություն ունեն բնակություն հաստատել Հայաստանում: Հայեցակարգն ու օրենքը մանրամասն ներկայացնելուց հետո եղան նոր առաջարկներ, դիտողություններ, որոնց նախարար Հրանուշ Հակոբյանը տվեց սպառիչ բացատրություններ, նշելով, որ այդ առաջարկությունները նույնպես հաշվի կառնվեն օրենքի նախագծում, մինչ կառավարության հաստատմանը ներկայացնելը:**

**Երկրորդ հարցով, որը վերաբերում էր «Կերպարվեստի գործիչների համահայկական համաժողովի» կազմակերպման աշխատանքներին, զեկուցեց հայրենադարձության վարչության պետ Արման Եղիազարյանը: Նա տեղեկացրեց, որ հնարավոր է եղել հավաքագրել եւ կազմել սփյուռքում առկա կերպարվեստի գործիչների ցանկը, ճշտել նրանց տվյալները ու շուրջ 350 գործիչների ուղարկել հրավերներ: Սեպտեմբերի 6-8-ը կազմակերպվող համաժողովի խորագիրն է «Արվեստը եւ համացանցը, արվեստը եւ բիզնեսը», որի աշխատանքներին մասնակցելու համար սփյուռքից կժամանեն 52 կերպարվեստի գործիչներ (նկարիչներ, քանդակագործներ, արվեստաբաններ, դիզայներներ եւ այլն), Արցախից, Գյումրիից՝ 10-ական, Ջավախքից՝ 5, Երեւանից ու այլ մարզերից՝ մի քանի տասնյակ արվեստագետներ: Ծրագրում նախատեսված են ցուցահանդեսներ Ժամանակակից արվեստի թանգարանում, Հայաստանի նկարիչների միությունում, Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայում: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 7-ին, համաժողովը իր աշխատանքները կսկսի ՀՀ ԳԱԱ դահլիճում, ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի բացման խոսքով: Ողջույնի խոսքեր կհղեն համաժողովի մասնակիցներին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ռադիկ Մարտիրոսյանը: Կլինեն 15 տարբեր զեկուցումներ, հետո կծավալվեն քննարկումներ: Սեպտեմբերի 8-ին համաժողովի մասնակիցներին կընդունեն Ամենայն հայոց կաթողիկոսը եւ հանրապետության նախագահը:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ECONOMICS & LAW CENTRE

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**
Սեմինարներ եւ խորհրդատվություն
ղեկավարների եւ մասնագետների համար
**«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԿԵՆՏՐՈՆ,**
Բաղրամյան 24դ, 54-24-81, 54-74-81

ԿՐԹՕՋԱԽ

## Բացվեց Լոռու մարզի Ֆիոլետովոյի ռուսական միջնակարգ դպրոցի հիմնանորոգված մասնաշենքը



**Լոռու մարզի Ֆիոլետովո գյուղի ռուսական միջնակարգ դպրոցի 197 աշակերտ եւ 22 ուսուցիչ «Գիտելիքի օրը» տոնեցին ոչ թե սեպտեմբերի 1-ին, այլ՝ սեպտեմբերի 2-ին, եւ այդ օրն էլ դպրոցի 12 առաջին դասարանցիները հնչեցրին նոր ուսումնական տարվա առաջին զանգը: Պատճառը հիմնովին նորոգվող դպրոցում դեռեւս նախորդ օրը կատարվող ներքին հարդարման փոքրիկ աշխատանքներն էին: Թեկուզ մեկ օր ուշացումով, բայց նորացված ու ժամանակակից գույքով եւ տեխնիկական միջոցներով հագեցած դպրոցամուտն առաջին դասարանցիները, նաեւ դպրոցի մյուս աշակերտներն ու մանկավարժները դեռ երկար կհիշեն:**

**Կրթօջախը 109 տարեկան է, սակայն վերջին 20 տարիների ընթացքում այստեղ որեւէ նորոգում չէր կատարվել: Տնօրեն Վալերի Միրզաբեկյանի համառ ջանքերի շնորհիվ, Հայաստանում ՌԴ դեսպանատան եւ «Ռուսհամագործակցությունը Հայաստանում» ֆեդերալ գործակալության միջնորդությամբ՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Շեւքետ Շայդուլինի, պատրաստակամություն հայտնեց եւ ֆինանսական միջոցներ տրամադրեց դպրոցի հիմնանորոգման համար:Բացի շինարարական աշխատանքներից՝ դպրոցին տրամադրվել է նոր գույք: Այն համալրվել է նաեւ ժամանակակից տեխնիկական միջոցներով, համակարգիչներով, հիմնվել է ինտերակտիվ եւ հեռակառավարման ուսուցման դասարան ու այդ ամենը «ՎՏԲբանկ», «Անելիքբանկ», «ԱրմենՏել», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների եւ Լոռու մարզպետարանի աջակցությամբ: Ընդհանուր առմամբ՝ դպրոցի շինաշխատանքների իրականացման համար հատկացվել է շուրջ 250 հազար ԱՄՆ դոլար:**

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

**«Նոյյան տապան» Մեդիա միավորումը հայտարարում է բարձրագույն որակավորման դասընթացների ընդունելություն**

«Նոյյան տապան» Մեդիա միավորումը հայտարարում է «Լրատվության եւ մեդիա ոլորտի այլ մասնագիտություններով աշխատողների բարձրագույն որակավորման դասընթացների» ընդունելություն:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 1-ից:

Ընդունելությունն անցկացվում է հետեւյալ մասնագիտություններով.

Լրագրություն, այդ թվում տպագիր մամուլի, հեռուստա -, ռադիո- եւ online

1. լրագրող
2. խմբագիր
3. թարգմանիչ
4. հեռուստաօպերատոր եւ մոնտաժող
5. Հեռուստահաղորդավար
6. Գովազդային մենեջեր եւ PR
7. Մեդիա մենեջեր

Ուսուցումը տարցիոնար է, ուսման ժամկետը 6 ամիս: Ուսուցումը վճարովի է:

Դասընթացներն ավարտողները կստանան համապատասխան վկայականներ:

Հասցե. ք. Երեւան, Իսահակյան 28

էլ.փոստ՝ info@nt.am, 777info@.am

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել 565965, 524279 հեռախոսահամարներով՝ ժամը 10.00-ից մինչեւ 17.00-ն (բացի շաբաթ եւ կիրակի օրերից):

Ռիելտոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<ԱԴԱՄԱՆԴ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է <<Առաջին հիփոթեքային ընկերություն>> ՈՒՎԿ ՍՊԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

Բնակելի տուն: Ընդհանուր մակերեսը 307.7 քմ եւ հողամաս 0.085 հա: Հասցե: Արարատի մարզ, ք. Մասիս, 10-րդ փող., թիվ 16: Մեկն. գինը՝ 17200000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 04.10.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուր. օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

**ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **«Գրին Լենդ Ինվեսթմենթ» ՓԲԸ-ի,** ՀՀ Կոտայքի մարզի Գողթ համայնքի վարչական տարածքում գտնվող 3 անանուն բնական աղբյուրներից ոռոգման նպատակով 20,7 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. սեպտեմբերի 9-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 3.09.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: